

# ՏԵՂԵԿԱՏՈՒԻ

DIEGHIEGADOU

ديغجادو

Հրատարակության Գաբիթի Հ.Բ.Ը.Մ.Ի

نشرة جمعية القاهرة الخيرية الأرمنية العامة

24  
ԱՊՐԻԼ  
2010



Հանդիսաւոր Ս. Պատարագ



ՀԲԸՄ-ի «Ծիածան» եւ  
ՅՈՒՄԱԲԵՐ Մ. Ը.-ի «Ծաղկաստան»  
Մանկական Երգչախումբեր

«Արաքս» Երգչախումբ

95 ամեակ



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

<b>Ապրիլեան Յեղասպանութեան 95-ամեակ</b> . . . . . 1	
Արաքսի Տեովլէթեան	
<b>Յեղասպանութեան 95-ամեակի Նշում Գահիրեի Մէջ</b> . . . . . 3	
«Տ»	
<b>Վկայութիւններ Հայոց Լեզուի Մասին</b> . . . . . 5	
Հաւաքեց Ն. Որբերեան	
<b>Կոմիտաս Վարդապետի Ծննդեան 140-ամեակի Նշում Գահիրեի Մէջ</b> . . . . 7	
«Տ»	
<b>Փրկել Փարաւոններուն Գաղտնիքները</b> . . . . . 8	
Թարգմանեց Սօսի Ներետեան-Յակոբեան	
<b>ՀԲԸՄ-ՀԵԸ-ի Հալէպի Անդրանիկ Պարախումբին Այցելութիւնը Գահիրէ</b> . . . . 10	
Արփի Խաչերեան	
<b>Հալէպի ՀԲԸՄ-ՀԵԸ-ի Անդրանիկ Պարախումբին Ելոյթը Գահիրեի Մէջ</b> . . . 11	
Արաքսի Տեովլէթեան	
<b>Պարահանդէս «Հայկական» Երգ ու Պարով</b> . . . . . 12	
Սօսի Ներետեան-Յակոբեան	
<b>Արաբերէն Լեզուով «Արեգ» Ամսօրեայ Պարբերական</b> . . . . . 13	
«Տ»	
<b>ՀԲԸՄ-ի Թատերական Արուեստի եւ Թուային Շարժանկարչութեան Հաւաքներ</b> . . 14	
Համադրեց՝ Անայիս Ծիզմեճեան	
<b>Գահիրեի Հաւաքականի Մրցումները ՀՄԸՄ Նուպարի,</b>	
<b>ՀՄԸՄ Արարատի եւ Ս. Թերեզայի Մէջ</b> . . . . . 15	
Սօսի Ներետեան-Յակոբեան	
<b>Պատանեկան ճամբար «Ուստի Զամբ»-ի Մէջ</b> . . . . . 16	
Արփի Խաչերեան	
<b>Մարզական Օր</b> . . . . . 17	
Համադրեց՝ Անայիս Ծիզմեճեան	
<b>Գեորգ Սագայեան Յաղթական՝ Գահիրեի ՀՄԸՄ Նուպարի</b>	
<b>Կազմակերպած Գնդամուղի Մրցաշարքին</b> . . . . . 17	
Համադրեց՝ Անայիս Ծիզմեճեան	
<b>Գահիրեի ՀՄԸՄ Նուպարի Կազմակերպած Զբօսապտոյտը Դէպի Ֆայում</b> . . . 18	
Համադրեց՝ Անայիս Ծիզմեճեան	
<b>Ոչխարասեղան</b> . . . . . 18	
Համադրեց՝ Անայիս Ծիզմեճեան	
<b>Զբօսապտոյտ Դէպի Աղեքսանդրիա</b> . . . . . 19	
Սօսի Ներետեան-Յակոբեան	
<b>Միջազգային Գիտաժողով Լուիրուած Հայ-Արաբական</b>	
<b>Տնտեսական Յարաբերութիւններուն</b> . . . . . 20	
«Տ»	
<b>Վարդանանցը Կը Նշուի Հայ Գեղարուեստասիրաց Միութեան Մէջ</b> . . . . . 21	
Գարոլին Շուշանեան	
<b>Տելեմաք եւ Էօթնի Քիւրքճեան 811,223 Տոլար Կը Կտակեն ՀԲԸՄ-ին</b> . . . 22	
Թրգմ. Անայիս Ծիզմեճեան	
<b>Գեղանկարչական եւ Լուսանկարչական Ցուցահանդէս</b>	
<b>ՀԳՄ-ի Թէքեան Սրահին Մէջ</b> . . . . . 22	
«Տ»	
<b>«Մեծն Ս. Գրիգորի Կարգի Ասպետ»-ի Աստիճանին Կ'արժանանան</b>	
<b>Եւրոպայէն Երեք Հայորդիներ</b> . . . . . 23	
Նազար եւ Արտեմիս Նազարեան Ամուլի Նորագոյն Բարերարութիւնները . . . 24	
Անդամական	

**ԽՄԲԱԳԻՐ**  
Արաքսի Տեովլէթեան

**ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ**  
**ԽՈՐՀՐԴԱՏՈՒ**  
Պերճ Թերզեան

**ՄԻԲԱԳՐԻՉ**  
**ՎԵՐՍՏՈՒԳԻՉ**  
Անայիս Ծիզմեճեան

**ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ**  
**ԶԵՒԱՌՈՐՈՒՄ**  
Շահէ Լուսարարեան

**ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ**  
**ՇԱՐՈՒԾԸ**  
Սիլվա Ղազէլեան

**ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ**  
Nubar Printing House

**ԹԻՒ 55 Նոր Շրջան**  
**ԱՊՐԻԼ 2010**



# ԱՊՐԻԼԵԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿ ՃԱՐՈՒՆԱԿՈՒՈՂ ԵՂԵՌՆ ԵՒ ՍԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ ՏԱՐԻ

Հայ ժողովուրդը 20-րդ դար մտաւ, 19-րդ դարու իր պատմութեան վերջին էջերուն վրայ արձանագրելով Համիտեան ջարդերու արհաւիրքները եւ սրտին ու մտքին մէջ կրելով կասկածն ու վախը ապագային նկատմամբ:

20-րդ դարու 15 թուականին, երիտասարդ թուրքերու արիւնարբու պարագլուխները արեան, միսի, հողի ու հարստութեան իրենց ծարաւը յագեցուցին կազմակերպելով եւ իրագործելով հայերու ցեղասպանութիւնը:

Չարչարանքներու ենթարկուած այրերէն եւ դէպի Սուրիոյ անապատներ քշուած կիներէն, հարսերէն, փոքրահասակ աղջիկներէն, տղաներէն ու երեխաներէն քիչերուն յաջողեցաւ հասնիլ Հալէպ եւ Տերզօր:

20-րդ դարու առաջին տասնամեակներուն երբ եղեռնէն վերապրած հայեր իրարու հանդիպէին, հարց կու տային իրարու, թէ ո՞րտեղացի են, անուն-ազգանուննին ի՞նչ է, ողջ ազգական ունի՞ն եւ այլն յուսալով, որ գուցէ կը յայտնաբերեն գաղթի ճամբաներուն վրայ իրենց կորսնցուցած հարազատներէն մէկը: Աշխարհասփիւռ հայ մամուլը լեցուն էր «Կը փնտռուի» խորագիրը կրող սիւնակին մէջ յայտարարուած անուններով:

20-րդ դարը շարունակեց իր երթը: Հայը նոյնպէս՝ փորձելով վանել յաճախանք դարձած իր յուշերը ջանալով ձերբազատուիլ ցաւալի ապրումներէն: Իսկ ականատեսներու զաւակները, թոռներն ու արդէն ծոռերը, փորձելով պահել իրենց աւանդուած իրողութիւնները կը շարունակեն իրենց երթը ոչ միայն խունկով, մոմով ու աղօթքով հանգստացնելով իրենց նահատակ հարազատներուն հոգիները, այլ պահանջելով արդարութիւն երկրի վրայ, երկրային արարածներէ:



Երկրի վրայ ընդհանրապէս մարդ արարածը խուլ է եւ կոյր, հոն՝ ուր կայ իր անձնական հաշիւը: Եւ այդ «հաշուիչ մեքենաներու» զոհերն են դարձեալ մարդ արարածները:

20-րդ դարը ամբողջ եղաւ շարունակուող ջարդերու շարան մը:

1915 Ապրիլ 24-ի մարդկային ջարդերուն յաջորդեցին ինքնութեան ու մշակոյթի եւ դժբախտաբար նաեւ լեզուի ջարդը: Այժմ Սասունցի, Չէթունցի, Հաճընցի, Այնթապցի, Ուրֆացի, Վանեցի հայերու եւ այլ վայրերու սերունդներէն երկու իրարու անձնօթ հայեր երբ հանդիպին, դարձեալ իրար



րու կ'ուղղեն նոյն հարցումները, սակայն ոչ միշտ հայերենով:

Ո՞ր տեղացի ես:

Անունդ ի՞նչ է:

Եւ ընդհանրապէս պատասխանները կ'ըլլան ո՛չ հայկական անուններ եւ ո՛չ մաքուր հայերենով եւ կամ ոչ հայերենով: Գործածուող հայերէն լեզուն արաբախառն է, ռուսախառն, նաեւ այն բոլոր երկիրներու լեզուներով խառնուած, ուր անոնք կայք հաստատած են:

Եղեռնը կը շարունակուի: Անպատիժ մնացած յանցագործին եղբայրները շարունակեցին անոր գործը կազմակերպելով Սումկայիթի եւ Պաքուի հայոց ջարդերը, որոնք անտեսուեցան, որպէսզի «հաշուիչ մեքենաներու» հաշիւները չխանգարուին:

Եղեռնը կը շարունակուի: Եղեռն է հայկական մշակութային կոթողներու, եղեռն է Մայրենի Լեզուի, բայց ի զուր:

Կանգո՛ւն է մեր փոքրիկ Հայաստանը: Կը բաբախէ հայու սիրտը ու անմեռ է հայու հոգին ամենուրեք, որովհետեւ «Անհնար է սպաննել ժողովուրդ մը որ չուզեր մեռնիլ», ժողովուրդ մը, որ ունի «Մեծ Երազ» եւ այդ երազի իրականացման ճամբուն վրայ պի-

տի կատարէ կարելին ու անկարելին:

Մեծ Եղեռնի 95-ամեակի այս տարուայ սկիզբը, նորանկախ Հայաստանի Սփիւռքի Նախարարուհին տարին կը յայտարարէր «Մայրենի Լեզուի» տարի:

Յստակ էր պատգամը ուղղուած բոլոր հայերուն, հայրենիքի թէ Սփիւռքի մէջ: Մաքրել հայերէն լեզուն օտարամուտ բառերէ, ըլլալ նախանձախնդիր Մայրենիի նկատմամբ եւ ապա Եղեռնի 95-ամեակին առիթով կոչ կ'ուղղէր հայ ժողովուրդին, յարգելու համար յիշատակը մեր մէկուկէս միլիոն նահատակներուն, մինչեւ 2015 թուականը Հայաստանի մէջ տնկել 1.5 միլիոն ծառ, ծնունդ տալ 1.5 միլիոն երեխայի եւ կ'առաջարկէր որ 1.5 միլիոն հայ վերադառնայ հայրենիք ու 1.5 միլիոն հայ դառնայ Հայաստանի քաղաքացի-երկքաղաքացի:

Թոյլ մի տաք որ մեր նահատակներուն հոգիները կրկին չարչարուին իրենց թոռներուն ու ծոռներուն շրթներէն արտասանուած աղճատուած հայերէնին, կամ օտար լեզուին ի լուր:

Մեր մաղթանքն է, որ երբ հասնիք մեր երագին, մեր ժողովուրդը իր երկրին մէջ խօսի հայերէն, գրէ՛ հայերէն:

Արաքսի Տեօվլէթեան





## ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ ՉԱՐԻՐԵԻ ՄԵՋ

**Շաբաթ 24 Ապրիլ առաւօտեան Սուրբ Եւ Անմահ Պատարագ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցիին մէջ:**

*Կ'արտատպենք Գահիրէի Ազգային Առաջնորդարանի դիւանին այս մասին լոյս տեսած հաղորդագրութիւնը:*

Հայոց Ցեղասպանութեան 95-րդ տարելիցին առիթով, 24 Ապրիլ 2010-ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ Սուրբ Եւ Անմահ Պատարագ մատուցեց Թեմիս բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ Սրբազան Եպիսկոպոս Մնացականեան:

Ներկայ էին ՀՀ Արտակարգ Եւ Լիազօր դեսպանը, հիւպատոսը, դեսպանատան աշխատակիցներ, Գահիրէի Թեմական Եւ Զաղաքական Ժողովներու ատենապետները Եւ անդամներ, Ազգային Վարժարաններու տնօրէնները, ուսուցիչները Եւ բարձր դասարաններու աշակերտները Եւ նահատակաց յիշատակը յարգող գաղութիս անդամներ:

Յընթացս Ս. Պատարագի Սրբազան Հայրը օրուան պատգամը տուաւ, յատկապէս նշելով «Նուիրական օր մըն Է Ապրիլ 24-ը մեր ազգային կեանքէն ներս. Եւ նուիրական այս օրը իւրաքանչիւր հայու կեանքին ուխտի օրն Է... որուն շարժիչ ոյժը, նպատակային ընթացքը կը մնայ նոյնը՝ ԱՊՐԻԼ, Ապրիլեան արդար պայքարը յաղթական աւարտին հասցնելու համար: Ապրիլ Հայու հոգիով ու սիրով, ազգային արժէքներու պահպանութեան Եւ պաշտպանութեան հաստատ համոզումով: Համախմբենք մեր ուժերն ու կարողութիւնները Եւ ի սպաս դնենք եգիպտահայ մեր ազգային կեանքէն ներս: Նոր ոյժ Եւ շունչ տանք հայրենասիրական Եւ ազգային մեր զգացումներուն՝ վերածելով այն գործնական Եւ աշխոյժ կեանքի:

Եւ ամենակարեւորը գոհ սիրտով մեր աղօթքը բարձրացնենք առ Աստուած Եւ իբրեւ սրտի խօսք ուղղուած մեր բիւրաւոր նահատակներուն ըսելով.

- Դուք այսօր մեզի հետ չէք, բայց մեր մէջ

էք, ձեր իղձերն ու նպատակները մենք կեանքի կը կոչենք, արդար ձեր պահանջքը սերունդէ սերունդ կը փոխանցենք՝ մինչեւ յաղթանակ:

Յաւարտ Ս. Պատարագի կատարուեցաւ հոգեհանգստեան արարողութիւն, որմէ յետոյ հոգեւորականաց Եւ դպրաց դասի ուղեկցութեամբ ժողովուրդը առաջացաւ նահատակաց մատուռ: Այնուհետեւ Եկեղեցւոյ բակին մէջ գետեղուած Եղեռնի զոհերուն յիշատակին կանգնեցուած խաչքարին առջեւ ծաղկեպսակներ դրուեցան Ազգային Իշխանութեան Եւ ՀՀ դեսպանութեան կողմէ Եւ հոգեհանգստեան աղօթք բարձրացուեցաւ առ Աստուած Մեծ Եղեռնի մէկ ու կէս միլիոն նահատակներու հոգւոցն ի հանգիստ:

**Շաբաթ, 24 Ապրիլ 2010, երեկոյեան ժամը 8:00-ին Պըլըքտանեան հանդիսասրահին մէջ, համագաղութային յուշահանդէս, հովանաւորութեամբ եգիպտահայ հոգեւոր պետերուն, նախաձեռնութեամբ Գահիրէի Ազգային Իշխանութեան, կազմակերպութեամբ Գահիրէի բոլոր միութիւններուն:**

Յուշահանդէսին բացումը հակիրճ խօսքով մը կատարեց Տոքթ. Արմէն Մազլումեան: Օրուան բանախօս ՀՀ լիազօր Եւ արտակարգ դեսպան Տոքթ. Արմէն Մելքոնեանի այս առթիւ արտասանած խօսքը դիպուկ էր Եւ այժմեական: Ան ամփոփ կէտերու մէջ ներկայացուց աշխարհի զանազան երկիրներու կողմէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման արձանագրած յառաջընթացը Եւ հայ-թրքական յարաբերութիւններու ներկայ իրավիճակին հետեւանքով հայկական պետութեան միջազգային գետնի վրայ ձեռք բերած վարկը, որպէս վստահելի գործընկեր եղող պետութիւն:

Յուշահանդէսին գեղարուեստական բաժնին մէջ նախ միասնաբար ելոյթ ունեցան ՀԲԸՄ-ի «Ծիածան» Եւ Յուսաբերի «Ծաղկաստան» մանկապատանեկան երգչախումբերը օրուան յատուկ երգացանկով մը, ապա՝ Ազգային Առաջնորդարանի «Արաքս» երգչախումբի անդամները վա-



ռած մոմերով, «Տըլէ Եաման» երգի երաժշտութեան ընկերակցութեամբ սրահին մուտքէն յառաջացան դէպի բեմ, որուն եզրին տեղադրելէ ետք մոմերը բեմ բարձրացան ու գեղարուեստական ղեկավար Միհրան Ղազէլեանի տուած առաջին ազդանշանը ընթացք տուաւ գեղարուեստական վայելք առթող համերգին:

Թէ մանկապատանեկան եւ թէ երիտասարդական այս երգչախումբերուն անդամները, մենակատարներն ու նուագակցողները՝ թոռներն ու ծոռները 95 տարի առաջ նահատակուած մեր մեծ հայրերուն ու մեծ մայրերուն, ուրախութեան սարսուռով լեցուցին անոնց անմեռ հոգիները, որոնք վստահօրէն այդ պահուն կը սաւառնէին մեր շուրջը:

Գեղարուեստական յայտագրէն ետք որպէս լրում յուշահանդէսին, ներկայացուեցաւ Լորընս Ժուրտանի «Յայոց Տեղասպանութիւնը» փաստագրական ժապաւենը:

Յուշահանդէսի գեղարուեստական բաժնին առթած ուրախ տպաւորութիւնները ակամայ փոխուեցան մեզ կրկին ետ տանելով 95 տարի:

Եգիպտահայ զոյգ հոգեւոր առաջնորդներու «հոգւոց» աղօթքն ու «Պահպանիչ»-ը սփոփիչ էին ու մեզ վերադարձուցին ներկային:

Սակայն այս համագաղութային յուշահանդէսով չաւարտեցաւ Ապրիլեան Եղեռնի 95-ամեակի նշումը Գահիրէի մէջ:

\*\*\*

**Կիրակի 25 Ապրիլի երեկոյեան ժամը 8:30-ին, ԶԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղին կազմակերպութեամբ, ԶԲԸՄ-ի Զելիոպոլսոյ նորաբաց փոքրիկ սրահին մէջ ցուցադրութիւն «Մոխիրներ եւ Փիւնիկ» խորագիրը կրող փաստագրական ժապաւենին:**

Ժապաւենին մասին նախ տեղեկութիւններ տուաւ ԶԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ Տիար Պերճ Թերզեան:

Այս վաւերագրական ժապաւենը ըսաւ ան, արտադրուած է Եոհաննէս Լեփսիւսի ծննդեան 150-ամեակին առիթով: Ան կը քն-

նարկէ Յայոց Տեղասպանութեան պատմական փաստերը, կը վերականգնէ հայերու մահուան երթի ճանապարհը Թուրքիոյ եւ Սուրիական անապատին մէջ, ցոյց կու տայ այն վայրերը ուր Լեփսիւս աշխոյժ գործունեութիւն ունեցած է օգնելու համար գաղթականներուն եւ որբերուն:

Ժապաւենը արտադրողներն են Մերլին Սոլախան եւ Մանֆրետ Պլանք, իսկ խորհրդրդատուն՝ Զերման Կոլց:

Գերմանիոյ մէջ եւ անկէ դուրս բազմաթիւ երկիրներու եւ օտար ու հայ կեդրոններու մէջ ցուցադրուած այս ժապաւենը ցուցադրուած է նաեւ 2009-ի «Ոսկէ Ծիրան» ժապաւենի միջազգային փառատօնին, Զալաստանի մէջ:

Մէկուկէս ժամ տեւող այս ժապաւենը կը յայտնաբերէ բազմաթիւ արժէքաւոր աղբիւրներ, ներառեալ 185 նկարներ, որոնք կը ներկայացնեն Լեփսիւսի կատարած ճամբորդութիւնները եւ հայ որբերու կեանքը:

Ապա, ան ներկայացուց գերմանացի հասարակական գործիչ, միսիոնար Եոհաննէս Լեփսիւսի (1858-1920) հայանպաստ գործունեութիւնը 1894-1896 Յամիտեան ջարդերէն սկսեալ մինչեւ իր մահը, որուն մէկ մասին ականատեսը եղանք այդ օր, ներկայացուած ժապաւենին միջոցով:

\*\*\*

**Յինգշաբթի, 29 Ապրիլի երեկոյեան ժամը 8:30-ին, Ապրիլեան Եղեռնի ոգեկոչում «Յուսաբեր»-ի վարչութեան կազմակերպութեամբ, Պըլըքտանեան հանդիսասրահին մէջ:**

Կոկիկ գեղարուեստական յայտագիրէ մը վերջ հետաքրքրական եւ պատշաճ ելոյթ մը ունեցաւ՝ Պէյրութէն յատկապէս հրաւիրուած գրող «Տկեանս նահատակութիւն» գրքի հեղինակ՝ Ճորճ Աբէլեան:

Ձեռնարկը Մեծ Եղեռնի 95-ամեակին նուիրուած ոգեկոչումներուն վերջինն էր Գահիրէի մէջ:

«Տ»



# ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԸԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՄԱՍԻՆ

Հաւաքեց՝ Ն. Որբերեան

## ՃՈՐՃ ՊԱՅՐԸՆ

անգլիացի բանաստեղծ

Աստուծոյ հետ խօսելու միակ լեզուն՝ հայերէնն է: Հայերէնը հարուստ լեզու է, լիովին պարունակում է մարդկային ձայների բոլոր հնչիւնները:

## ՇԱՐԼ Փ. ՌՈՊԵՐ

Ֆրանսացի գրագետ

Հայերէն լեզուն Աստուծոյ հեղինակածն է:

## ԱՆԹՈՒԱՆ ՄԷՅԷ

հնդեւրոպական լեզուներու մասնագետ

Յայտնի է, որ այբուբենը գլուխգործոց մըն է: Հայ հնչաբանութեան հնչիւններէն իւրաքանչիւրը յատուկ նշանով մը նոթագրուած է եւ դրոյթը այնքան լաւ հաստատուած է, որ հայ ազգին հայթայթած է հնչիւնաբանութեան վերջնական արտայայտութիւն մը, արտայայտութիւն՝ որ պահպանուած է մինչեւ այսօր առանց փոփոխութիւն մը կրելու, առանց բարելաւում մը ստանալու կամ պետք ունենալու, վասնզի սկիզբէն իսկ անիկա կատարեալ է:

Հայերէնը ոչ միայն կը հաւասարի եւրոպական լեզուներու, հապա կը գերազանցէ գաւտնք: Ոճի տեսակետով հնդեւրոպական ոչ մէկ լեզու չի գերազանցեր հայերէնը, նոյնիսկ չի հաւասարիք անոր:

Երբ կազմաւորուած էր հայ գրականութիւնը, ժամանակակից եւրոպայի մեծ ազգերէն ոչ մէկը դեռեւս կար... Այն ժամանակաշրջանին, երբ Ֆրանսա կամ Անգլիա անունը նոյնիսկ գոյութիւն չունէր, Հայաստանը մեծ դեր խաղացած է պատմութեան մէջ... Եւ ունէր ազգային գրական այնպիսի հնութիւն, որ երկար դարերով կը գերազանցեր եւրոպական ազգերու հեղինակածները:

Աւելի քան 2700 մայր լեզուներէն հինգէն մէկն է հայոց մեծասքանչ լեզուն:

## ՇԹԱՅԵՐ

Վիեննայի համալսարանի փրոֆ.

Գիտնականներու համաձայն, այսօր աշխարհի ամենակատարեալ լեզուներէն մէկն է հայերէնը, որ օժտուած է անկորնչելի հարստութեամբ եւ անոր անմիջապէս յաջորդներէն մէկն ալ գերմաներէնն է եւ ես հպարտ կը զգամ զիս՝ գերմանախօս մը ըլլալուս համար:

## ՖՐԵՏԵՐԻՔ ՖԷՅՏԻ

Ֆրանսացի լեզուաբան հայագետ

Կեանքիս ամէն մէկ վայրկեանը նուիրած եմ հայերէնի ուսումնասիրութեան եւ իմ գիտցած լեզուների մէջ հայերէնը բացառիկ է... Նախ՝ որպէս զարմանալի տրամաբանական լեզու, ապա նաեւ՝ իր ճկունութեամբ, նոր բառեր կազմելու դիւրութիւններով:

## ՖՐԵՏԵՐԻՔ ՄԱՔԼԵՐ

Կայսրի մը պէս հպարտ եմ հայոց լեզուն գիտցած ըլլալուս համար: Այնքան կը սիրեմ Ձեր լեզուն, որ տանս մէջ հայերէն կը խօսիմ տիկնոջս ու զաւակներուս հետ:



### **ՎԱԼԻՍՄԱՏ ՀՈՎԵՐԻ**

գրող (Երկրորդ Երկային)

Կ'ըսուի թե հայերը աղքատ են. բայց սխալ է: Անոնք ունին մեծ գանձարան մը. հպարտ պիտի ըլլայի, եթէ հայերէնը մայրենի լեզուս եղած ըլլար:

### **ՈՊՊԵՐ ԿՈՏԷԼ**

Ժընեւի համալսարանի փրոֆ.

Հայերէնի պէս լեզու մը անտեսողները կամ ուրացողները որքան ալ հարուստ ըլլան, ինծի կը թուի թէ անոնք կերպով մը կ'աղքատանան:

### **ԼԻԻՔ ԱՆՏՐԷ ՄԱՐՍԷԼ**

բանաստեղծ, թարգմանիչ

Վարուժանի գործերը չեմ փոխանակեր պուլկարական բանաստեղծութեանց ընդհանուր հաւաքածոյին հետ: Ոչ ալ Չարենցի գործերը ռումանական ընդհանուր հաւաքածոյին հետ:

### **ՇՈՒԼՑ**

հունգարացի հայագետ, փրոֆ.

Հայ լեզուն ունի 40 հազար արմատ, միւնչդեռ շատ մը ուրիշ լեզուներու մէջ 10 հազարը չ'անցնիր:

Հայոց լեզուն իր լեզուական ստեղծագործական ոյժով ընդունակ է թափանցելու միւնչեւ Մասիսի գագաթը, միաժամանակ բիրտեղեայ է ինչպէս Սեւանի ջուրերը:

### **ՐԵՆՏԸՆ ՍԹՈՆ ՆԵՐՍ**

յայտնի մտաւորական

«Ես աստղագետ եմ» ըսող գիտնականին պատասխանել եմ. «Ես ալ հայագետ եմ»:

### **ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ**

... Մեր լեզուն միայն մեզ չի պատկանում, այլ աշխարհին, նա միայն մեր սրբութիւնը չէ, այլ մասունքը հանուր մարդկութեան... Այդ լեզուի ինամքը, նրա անաղարտութիւնն ու պաշտպանութիւնը դրուած է մեր վրայ:

### **ԵՕԶԷՖ ՄԱՐԿՈՒԱՐՏ**

գերմանացի լեզուագետ

Եթէ Մաշտոցի գործը համեմատենք Պիպինի եւ նրա գիւնակից Վիլֆրիդի գործունեութեան հետ, այս վերջինները թզուկներ կ'երեւան համեմատութեամբ այդ մտքի հսկայի: Միջնադարեան ո՞ր ժողովուրդը կը կարողանայ պարծենալ, թէ երբեւիցէ իր սեփական լեզուով կամ թէկուզ մի այլ՝ բախտաւոր լատիներէնով, հրապարակ է հանել Վարդանի եւ իր ընկերների դիւցազնամարտի այնպիսի մի նկարագրութիւն, ինչպիսին Եղիշէի նկարագրածն է:

### **ԷՆԴՐԻԻ ՈՒԱՅԹ**

Եթէ ինծի հարցնեն թէ ո՞րն է ցեղերու մէջ ամենացանկալին, ամենէն առաջ պիտի տամ հայ ցեղը:

### **ԹՈՒՐԵ ԲԱՆՏԱՊԵՏ ՍԸ**

Մեզի պէս ջարդարար ազգի մը զաւակ ըլլալէ, կը նախընտրեմ Ձեզի պէս ազգի մը մահուան ընկեր ըլլալ:

### **ՍՈՒԹԷՍՍ**

ամերիկացի հայագետ

ՖԷՅԴԻ ֆրանսացի հայագետի Հայերէնը ՄԱԿ-ի համար որպէս միջազգային լեզու առաջարկելու առթիւ:

Մենք վստահ ենք, որ բառերու ճշգրիտ իմաստը տուող լեզու մը որ կայ՝ հայերէնն է եւ կ'առաջարկենք որ անոր տրուի նախապատուութիւնը՝ փոխանակ, «Եսպերանթո»-ին:

### **ՎԱԼԵՐԻ ԲՐԻՒՍՈՎ**

ռուս բանաստեղծ

Հայերէնը լեզուներու անծանօթ գեղուհին է:





## ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐՂԱՊԵՏԻ ԾՆՆՂԵԱՆ 140-ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ ԳԱՐՅՐԵԻ ՄԷՋ

Եգիպտոսի Յայոց Բարեխնամ Առաջնորդ Գերշ. Ս. Աշոտ Ս. Եպիսկոպոս Մնացական-եանի հովանաւորութեամբ 25 Փետրուար 2010-ին, Յելիոպոլսոյ Պըլըքտանեան հանդիսասրահին մէջ, Գահիրէի Ազգային Իշխանութեան կազմակերպութեամբ կայացաւ Կոմիտաս Վարդապետի ծննդեան 140-ամեակին նուիրուած հանդիսութիւնը:

Հանդիսութեան գեղարուեստական երկրաժին ճոխ յայտագիրը պատրաստած էր գաղութիս մէջ իր երաժշտակրթական անխոնջ գործունեութեամբ յարգանքի եւ գնահատանքի արժանացած գեղարուեստական ղեկավար եւ խմբավար Միհրան Ղազէլեան:

Հանդիսութեան ընթացքին Ազգային Առաջնորդարանի «Արաքս» երգչախումբին կատարմամբ հնչեցին Կոմիտասի ստեղծագործութիւններէն երգեր, մեներգեր, խմբերգեր, զուգերգ դաշնամուրի ընկերակցութեամբ կամ a capella, պար եւ երաժշտութիւն:

Օրուան բանախօսն էր երաժշտագետ Յայկ Աւագեան, որուն խօսքը հետաքրքրական ու դիպուկ անդրադարձ մըն էր հայ երաժշտագիտական պատմութեան մէջ Կոմիտաս Վարդապետի ունեցած բացառիկ դերին ու դիրքին մասին, նաեւ անցեալին եւ այսօր մեր իրականութեան մէջ տիրող «զոհ Վարդապետ»ի մեր սահմանափակ ընկալումին:

Այդ օր «Արաքս»ը յորդեցաւ Կոմիտասի շունչով, իսկ Գահիրէի զուսպ երկինքը յորդառատ արցունք թափեց ողողելով անշրդի փողոցները:

Նշենք թէ այս առթիւ պատրաստուած էր գեղեցիկ գրքոյկ-յայտագիր մը, որուն մէջ ի միջի այլոց տեղ գտած են Կոմիտաս Վարդապետի 1911 թուականին Եգիպտոս այցելութեան ընթացքին տեղական մամուլին մէջ լոյս տեսած յօդուածներէն հատուածներ: Ստորեւ անոնցմէ կ'արտատպենք ՅԲԸՄ-ի հետ առնչուող բաժինները:

### ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐՂԱՊԵՏԸ ԳԱՐՅՐԵԻ ՄԷՋ

1911 թուականի Ապրիլ 22-ին, Շաբաթ օր, Եգիպտոսի՝ «Մանթաշօֆ» քարիւղի ընկերութեան ընդհանուր գործակատար՝ Յով-

հաննէս Մուրաֆեանի մասնաւոր հրաւերով, Կոմիտաս կը ժամանէ Աղեքսանդրիա: ...Իր գալուստը կը համընկնէր ՅԲԸՄ-ի կազմութեան 5-ամեակի տօնակատարութիւններուն: Կազմակերպիչ մարմինը, Վահան Մալեգեանի իմաստուն թելադրութեամբ, օգտուելով վեղարաւոր արուեստագետին ներկայութենէն եւ ունեցած բացառիկ ժողովրդականութենէն, զայն Գահիրէ կը հրաւիրէ իր ոգեւորիչ ներկայութեամբ պատուելու Միութեան 5-ամեակի դաշտահանդեսը, որ տեղի պիտի ունենար Նոյն ամսուան 30-ին:

Նեղոսի ափին, Կեզիրէ-ի գեղեցիկ եւ դալար խորշին մէջ, երկնասլաց արմաւենիներու ցանցառ շարքի մը ամբողջ երկայնքին, կը տարածուէր Ամպասատօր-ի ամառնային բացօթեայ թատրոնը, իր հաստատուն բեմով, ընդարձակ լսարանով, քարաշէն օթեակներով եւ յարակից պարտէզներով:

«Քասր-Էլ-Նիլ»ի կամուրջէն ծնունդ առած՝ դալար ճիւղերով կամարակապ ծառուղի մը՝ հանդիսականները կ'առաջնորդէր թատրոնի գլխաւոր մուտքը: Ներկաներու թիւը կ'անցնէր 1500-ի սահմանը:

...Դադարին՝ ժողովուրդին կողմէ արտայայտուած փափաքին տեղի տալով, Կոմիտաս Վարդապետ՝ հակառակ որ անշուշտ հաճոյ չէր իրեն բաց օդին երգել, մանաւանդ որ դաշնակի վրայ ընկերակցող մը պարտաւորուած ալ չէր, յանձն կ'առնէ երգել թախծաբոյր երգերէն «Ձայն տուր ով ծովակ»ը, եւ «Կռունկ»ը:

*Բարեգործականի «Միութիւն» ամսօրեայ պաշտօնաթերթին խմբագիր-տնօրէն Վահան Մալեգեանի յուշերէն, վերապատմուած Եղուարդ Յակոբեանի կողմէ:*

«...Մասնաւոր պարտք կը սեպենք մեր խորին երախտագիտութիւնը յայտնել տաղանդաւոր երաժշտագետ Գերշ. Ս. Կոմիտաս Վարդապետի՝ որ ազնուութիւն ունեցած էր Աղեքսանդրիայէն յատկապէս քաղաքս (Գահիրէ) գալ եւ իր մասնակցութեամբ հանդէսին փայլը աւելցնել»:

ՅԲԸՄ-ի Տեղական Մասնաժողով

«Տ»



## ՓՐԿԵԼ ՓԱՐԱՒՈՆՆԵՐՈՒՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

Որքան որ կարելի է նոր հնութիւններ յայտնաբերելը, նոյնքան կենսական է հիները պահպանելը», կ'ըսէ Տոքթ. Չահի Յաուաս Եգիպտոսի հնութիւններու գերագոյն խորհուրդի ընդհանուր քարտուղար եւ Կիզէի, Սաքքարայի եւ Պահարեյա Ովասիսներու պեղումներու տնօրէնը իր յօդուածին մէջ, լոյս տեսած Horus Inflight Magazine of Egypt Air February/March 2010 թիւին մէջ:

Փարաւոններու երկիրը միշտ կախարդիչ խորհրդաւորութիւն ներշնչած է ու կալանած մարդոց սրտերն ու մտքերը աշխարհի ամէն կողմ: Տոքթ. Չահի Յաուաս միշտ կ'ըսէ, թէ յայտնագործած են երկրի հնութիւններուն հազիւ 30 առ հարիւրը, մինչ 70 առ հարիւրը տակաւին կը մնայ աւազներուն տակ յայտնաբերուելու սպասման մէջ: Ան կ'ուզէ իր այս յօդուածին միջոցաւ ցոյց տալ այն աշխատանքները որոնք կը կատարուին Սաքքարայի մէջ եւ այն մեծածաւալ ծրագիրները որոնք մշակուած են ու արդէն իսկ կը կիրարկուին:

Սաքքարան Եգիպտոսի հնագիտական ամենաապշեցուցիչ վայրերէն մէկն է. ան կը նմանի գիրքի մը որուն էջերը կը պատմեն Եգիպտոսի պատմութիւնը հնագոյն շրջաններէն մինչեւ Յռոմեական շրջանին աւարտը:

Հոս, Սաքքարայի բարձրաւանդակին վրայ է որ շինարարական յեղաշրջում մը կատարուած է փարաւոնական Յոդ Յարստութեան սկիզբը: Եգիպտացի հանճարեղ ճարտարապետ Իմհոդէպ (Imhotep), Ք.Ա. 2667-2648 ին ցարդ յայտնի աշխարհի առաջին քարէ կոթողը՝ հռչակաւոր Աստիճանաւոր Բուրգը շինած է որպէս դամբարան օրուայ փարաւոն Չօսերի (Djoser):

Այժմ, Սաքքարայի մուտքին շինուած է Իմհոդէպի թանգարանը ուր լսարանի մը մէջ կը ցուցադրուի National Geographic ի կողմէ պատրաստուած Սաքքարայի մասին 4 վայրկեանոց վաւերագրական երիզ մը որ կը պատկերէ Աստիճանաւոր Բուրգին եռակողմանի նմոյշը:

Լսարանին կից, փոքրիկ թանգարանին մէջ, նուրբ ճաշակով գետեղուած են Սաքքարայի տարածքէն յայտնաբերուած հնութիւններ: Աստիճանաւոր Բուրգին մօտակայքը կը գտնուի Փարաւոնեան ճոդ Յարստութեան թագաւոր Դեդիի (Teti) բուրգը, որ իշխած է մօտաւորապէս 4300 տարիներ առաջ: Վերջին շրջանին

կատարուած պեղումներուն շնորհիւ, յայտնաբերուած է Դեդի թագաւորին երկու կիներուն, նաեւ անդրանիկ որդւոյն Դեդիանխ-Քեմ (Tetiankh-kem) ի բուրգերը, որոնց միջոցաւ տեղեկութիւն քաղած ենք Հին Թագաւորութեան ճոդ Յարստութեան սկզբնաւորութեան մասին:

Դեդի գերդաստանին պատկանող բուրգերուն արեւելեան կողմը յայտնաբերեցինք բուրգ մը ծանօթ՝ Lepsius 29 կամ «Անգլուխ Բուրգ» անունով որ տարիներէ ի վեր անյայտացած էր անապատի աւազներուն տակ ու անոր տէրը ցարդ անյայտ է:

Հակառակ որ յայտնաբերումները մեզի առիթը կ'ընծայեն տեղեկութիւններ քաղելու անցեալի գաղտնիքներուն մասին, սակայն հոս պիտի կեդրոնանամ վերանորոգման աշխատանքներուն վրայ որոնք կը կիրարկուին Սաքքարայի մէջ: Ամենակարեւորները այն աշխատանքներն են որոնք կը կատարուին Աստիճանաւոր Բուրգին վրայ նաեւ այն, որ կը տարուի Serapeumը փրկելու համար կ'ըսէ Չահի Յաուաս:

Չօսեր թագաւորի Աստիճանաւոր Բուրգը մեծ վնասներու ենթարկուած է իր շինութիւնէն ի վեր, 4500 տարիներ առաջ: Անցեալին վնասուած է երկրաշարժէ իսկ այժմ արդիական կեանքի պատճառաւ՝ ապականութենէ: Այն հնագետը որ սկսած է նորոգութիւններ ընել այս բուրգին վրայ Jean-Philippe Lauer-ն է, որ շատերու կողմէ կը կարծուէր ըլլալ Իմհոդէպի մարմնաւորունը: Ան իր կեանքէն 70 տարիներ նուիրած է Սաքքարային:

Հակառակ իր տարած աշխատանքին, բաւարար չէր փրկելու այս հինաւորաց բուրգը: Վերջին 15 տարիներու ընթացքին մեծ ճեղքեր սկսան նկատուիլ ստորերկրեայ սենեակներուն մէջ ու քարեր սկսան իյնալ բուրգին թէ՛ ներքին թէ՛ արտաքին մարմիններէն: Երբ ուսումնասիրեցինք, տեսանք որ բուրգին ներքնակառոյցը, որուն մէջ կ'երկարէին 7 ք.մ. անցքեր ու սենեակներ, փլուզումի վտանգի տակ էր: Նոյնիսկ թաղման սենեակը որ կը գտնուի 29 մ. խորութեան վրայ փլչելու վրայ էր հակառակ որ 2500 տարիներ առաջ, 26րդ Յարստութեան ընթացքին, նորոգութեան աշխատանքներ տարուած էին որպէս նեցուկ փայտէ գերաններ գործածելով:



Մեր նորոգութեան աշխատանքին համար օգտագործեցինք կրաքարէ հատուածներ (blocks) ամրապնդելու համար բուրգը ու խնամքով վերցուցինք կուտակուած աւազները: Բուրգին ներքելը, մեծ զգուշութեամբ պեղեցինք թաղման սենեակը եւ յայտնաբերեցինք թագաւորին վիմադամբանը (sarcophagus): Այժմ կ'աշխատինք լաստակներով (scaffolding) ամրապնդելու միջնասենեակը որպէսզի ան կարենայ կրել բուրգին ներքնակառոյցը: Մենք կրկին պեղեցինք ու չափեցինք բուրգին ստորերկրեայ անցքերը եւ շատ մեծ անակնկալ մըն էր մեզի համար այդտեղ գտնել երկու նոր բապուղիներ: Վերջերս կանգնած էի Չօսերի Աստիճանաւոր Բուրգին առջեւ - կ'ըսէ Տոքթ. Չահի Յաւուս - եւ կը դիտէի խումբ մը երիտասարդ հնագէտներ ու ճարտարապետներ աշխատանքի պահուն. գոհունակութիւն զգացի որ մեր հնութիւններուն վերանորոգումն ու պահպանումը վստահուած են մասնագետ ու հրաշալի արհեստավարժերու:

Շատեր որոնք անտեղեակ են մեր տարած աշխատանքին մանրամասնութիւններուն, կ'այսպէսն են մեզ թէ հոս-հոն փորելով ու բուրգերուն մէջ ծակեր բանալով վնաս պիտի հասցնենք այս հնութիւններուն: Ես կը նախընտրեմ վիճաբանելու կամ ինքզինքս պաշտպանելու փոխարէն հրաւիրել այս տեսակ մարդիկ ու անոնց ցույց տալ մեր տարած հսկայ աշխատանքն ու քաղած արդիւնքները:

Աստիճանաւոր Բուրգին ու անոր շրջակայքը գտնուող մեծեաններուն նորոգութեան հետ միասին, դէպի հիւսիս գտնուող Serapeumին վրայ ալ աշխատանք կը տարուի: Այս ստորերկրեայ դամբարանը յայտնաբերուած է 1851ին մեծ Եգիպտագետ-հնագետ Auguste Marietteի կողմէ: Անոր գետնափոր բապուղիներուն խորշերուն մէջ գտնուած են կրանիթէ հսկայ վիմադամբաններ, որոնց մէջ «սուրբ ցուլերու» (Apis) զմռսուած դիակները պահուած են:

Ինչպէս որ շատ մը կարելոր յայտնաբերումներ պատահած են պարզապէս դիպուածով, վերջերս ալ նոյն ձեւով երեւան հանուած է Յադիօր (Hat-hor) չաստուածուհիին ծառայող քրմուհի Նեֆերուդի (Neferut) եւ Յինգերորդ Յարստութեան պատկանող Ունաս (Unas) բուրգին շինութեան հսկիչ Ima-maat-ի գերեզմանները: Տեսնելով թէ զողբու խումբ մը գիշերով փոսեր կը փորէր Աստիճանաւոր Բուրգին արեւմուտքը, Կիսր-էլ-Մուտի (Տուրէնին կա-

մուրջը) կոչուած շրջանին մէջ, հետեւցուցինք որ աւազակները գիտէին բան մը որմէ մենք տակաւին տեղեակ չէինք: Անմիջապէս պեղումներ սկսանք նոյն տեղը կորուստէ փրկելու համար հոն գտնուող հնութիւնները: Ի յայտ եկաւ որ այդ տարածքը Յին Յարստութեան ժամանակ գործածուած գերեզմանատուն մըն էր եւ մեծ մասամբ արդէն իսկ կողոպտուած: Այս նոյն գերեզմանատունը կրկին գործածուած էր Նոր Յարստութեան շրջանին եւս: 12մ. խորութեան տակ գտանք 30 զմռսուած մարմիններ նաեւ տակաւին չբացուած քարէ դամբարան մը եւ երկու փայտէ դագաղներ 26րդ Յարստութեան պատկանող զմռսուած դիակներով:

Շուտով պիտի կարենանք թոյլ տալ ժողովուրդին նոր վայրեր այցելել Սաքքարայի տարածքին ինչպէս Աբիս (Apis) ցուլերուն գերեզմանները Serapeum-ի ստորերկրեայ բապուղիներուն մէջ, Նոր Թագաւորութեան շրջանէն մնացած գերեզման մը որ կը պատկանի Tut-Ankh-Amon-ի գանձապահին, նաեւ առաջին գերեզմանը oremhebi երբ ան տակաւին բանակի հրամանատար էր նախքան 18րդ Յարստութեան վերջին թագաւորը ըլլալը: (Իր բուն թաղման վայրը կը գտնուի Լուքսորի Թագաւորներու Յովիտին մէջ -Valley of the Kings-):

Սաքքարայի բարձրաւանդակին մուտքին կարելի պիտի ըլլայ այցելել «Կատուներու Դուռը» կոչուած բաժինը ուր թաղուած են հանրածանօթ պալատականներ Amenhotep III եւ IV, Tut-Ankh-Amon եւ Ramses II փարաւններու շրջաններէն:

Տահշուրի մէջ, որ կը գտնուի Սաքքարայէն 15 ք.մ. հարաւ, պիտի բանանք Ծռած Բուրգը որ կը պատկանի Cheops ի հօր Snefru-ի: Նաեւ կարելի պիտի ըլլայ այցելել Ապու Սիր կոչուած վայրը ուր 5րդ Յարստութեան թագաւորներէն շատեր թաղուած են:

ՄԵԿ խօսքով, 2010-ը պիտի ըլլայ գլխաւոր հնութիւններու վերականգնման, նորերու յայտնաբերման եւ հանրութեան առջեւ հրաշալի վայրերու մուտքը բանալու տարի մը: Եգիպտոսի աւազներուն տակէն միշտ երեւան կու գան թաքնուած հնութիւններ: Բնաւ կարելի չէ գիտնալ, թէ տակաւին ի՞նչ գաղտնիքներ պահուած են հոն:

Թարգմանեց Սօսի Ներեստեան-Յակոբեան



# ՀԲԸՄ-ՅԵԸ-Ի ՀԱԼԵՊԻ ԱՆՊՐԱՆԻԿ ՊԱՐԱԽՈՒՄՔԻՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԳԱՇԻՐԷ ՀԻՆՉՉԱԲԹԻ 1 ԱՊՐԻԼԵՆ ԵՐԵՔՉԱԲԹԻ 6 ԱՊՐԻԼ 2010

ՀԲԸՄ-ՅԵԸ-ի Հալեպի Անդրանիկ պարախումբը այցելեց Գահիրե յատուկ հրաւերով Գահիրեի ՀԲԸՄ-ին: Երկսեռ խումբը որ կը բաղկանար երեսուն պարողներ է պատասխանատուներէ, Գահիրեի օդակայանը ժամանեց Յինգշաբթի 1 Ապրիլի երեկոյեան եւ դիմաւորուեցաւ Գահիրեի ՀԲԸՄ-ի երիտասարդացի անդամներուն կողմէ: Անոնք իջեւանեցան Horeya պանդոկը Յելիոպոլսոյ շրջանին մէջ: Նոյն գիշեր երիտասարդական հանդիպում մը տեղի ունեցաւ ՀԱՀ Կոկանեան Սրահին մէջ:

Ուրբաթ առաւօտեան նախաճաշէն ետք եգիպտահայ իրենց հասակակիցներուն ընկերակցութեամբ պարախումբին անդամները այցելեցին Կիզայի Բուրգերը եւ Սփինքսը:

Կեսօրին անոնք ուղղուեցան Andrea գեղջկական ճաշարանը: Երեկոյեան անոնք գացին City Stars Mall ուրկէ գնումներ կատարեցին եւ զմայլեցան կեդրոնին ճոխութեան:

Շաբաթ առաւօտը տրամադրուած էր Եգիպտական Թանգարան եւ Խան Խալիլ պատմական շուկայ այցելութեան, իսկ կեսօրին հիւրերը

ճաշեցին TGI Friday's ճաշարանը վայելելով Նեղոսի գեղեցիկ տեսարանը: Երեկոյեան խումբը ներկայ եղաւ Novotel պանդոկին մէջ այս առթիւ կայացած պարահանդէսին:

Կիրակի Սուրբ Չատկուայ օրը, երեկոյեան Անդրանիկ պարախումբը հանդէս եկաւ Գահիրեի Ամերիկեան Համալսարանի գեղաշուք Ewart Memorial սրահին մէջ, որուն ներկայ խումբերամ եգիպտահայութիւնը ծափողջոյններով խանդավառեց Անդրանիկը:

Երկուշաբթի, եգիպտական աւանդական ազգային տօնին՝ Շամ Էլ Նեսիմի առթիւ, Անդրանիկ իր օրը անցուց ՀՍԸՄ Նուպար մարզադաշտին մէջ, ուր հաւաքուած էին եգիպտահայերէն շատեր:

Երեկոյեան Նեղոսի վրայ նաւային զբօսատոյտով հալեպահայերը հրաժեշտ տուին իրենց եգիպտահայ բարեկամներուն, մօտիկ ապագային կրկին հանդիպելու յոյսով:

Արփի Խաչերեան



Յիշատակի նկարներ յիշատակելի օրուան մը առիթով



## ՀԱԼԵՊԻ ՀԲԸՄ-ՎԵՐԻ ԱՆՊՐԱՆԻԿ ՊԱՐԱԽՈՒՄՔԻՆ ԵԼՈՅԹԸ ԳԱՇԻՐԵԻ ՄԵՋ



Սփիւռքի տարածքին ծնունդ առած բազմաթիւ հայկական պարախումբերէն մէկն է Հալէպի ՀԲԸՄ-ի Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան (ՀԵԸ) «Անդրանիկ» պարախումբը, որ ՀԲԸՄիութեան Գահիրէի Մասնաճիւղին հրաւերով, ելոյթ ունեցաւ Գահիրէի Ամերիկեան Համալսարանի Ewart Memorial Hall-ին մէջ Կիրակի 4 Ապրիլ 2010-ի երեկոյեան ժամը 8:30-ին:

Հանդիսութեան բացումը կատարեց Տիկին Լալա Նիկոլեան: Ան հաղորդական ձայնով, հայերէն եւ անգլերէն լեզուներով տուաւ կենսագրութիւնը «Անդրանիկ» պարախումբին եւ անոր այժմու պարուսոյց՝ Աշոտ Սարգսեանի:

«Անդրանիկ» պարախումբը կազմուած է Հալէպի մէջ 2003 թուականին «հայ երիտասարդները հայկական ոգիով սնուցանելու եւ անոնց մէջ հայ արուեստի նկատմամբ սեր եւ նախանձախնդրութիւն ներարկելու նպատակով»:

«Անդրանիկ» պարախումբը մարզուած է ուղեկավարուած Հայաստանէն յատուկ հրաւիրուած արհեստավարժ պարուսոյցներով: 35 պարման պարմանուհիներէ բաղկացած խումբը 2004 թուականէն սկսեալ 8 ելոյթներ ունեցած է Սուրիոյ գանազան քաղաքներուն եւ Պէյրութի մէջ: ՀԲԸՄ-ի 100-ամեակին նուիրուած եզրափակիչ հանդիսութեան, որ կայացաւ Երեւանի մէջ, պարախումբը ելոյթ ունեցած է Երեւանի Պետական Օբերայի դահլիճին մէջ:

«Անդրանիկ» պարախումբը իր ելոյթը սկսաւ «Կարապի լիճ»-ով: Աջ շոյող ու հոգի գերող պատկեր մը գծուած էր բեմահարթակին վրայ: Երաժշտութեան կշռոյթով կարապները կեանք առին ու թռիչք տուին «Անդրանիկ»-ի ելոյթին: Պարուսոյց Աշոտ Սարգսեան յայտագրին երկու բաժիններուն մէջ ներկայացուց 14 պարեր, կազմուած այլազան ազգային եւ արդիական ինքնատիպ պարերէ:

Մտայղացուած գեղեցիկ պատկերներ, ոտքերու եւ ձեռքերու բազմազան շարժումներ, ճկունութիւն, արագաշարժութիւն, ճաշակաւոր տարազներ եւ ոչ խլացուցիչ երաժշտութիւն: Յատկանիշներ որոնցմով կրնան հպարտանալ ե՛լ պարուսոյցը ե՛լ «Անդրանիկ»-ը: Մեջընդմէջ ձայնասփռուեցաւ կարգ մը պարերու մասին տեղեկութիւն եւ պարին համապատասխանող բանաստեղծութիւն, ձայնագրուած հալէպահայ յայտնի ասմունքող Օր. Սալբի Տարագճեանի ձայնով:

«Վարդ Աղջիկ»ը յայտագրի առաջին բաժնին մէջ տեղ գտած միակ հայկական պարն էր: Երբ երաժշտութիւնը հնչեց ու քուլիսներուն ետեւէն բեմ մտան երեք «Վարդ հայուհիներ» դահլիճին վերնայարկէն երիտասարդութիւնը դիմաւորեց հայկական պարը բուն ծափահարութեամբ: Ամօթի եւ ուրախութեան պահ էր ինձի համար: Ամօթ, որովհետեւ կը կարծէի, թէ երիտասարդները անելի կը գնահատեն արդիական պարերը քան հայկականը եւ ուրախութիւն՝ երբ զգացի թէ սխալական եմ եւ հայը ներկայ է իրենց մէջ: Ընորհակալութիւն տղաք:

Յայտագրին հայկական երկրորդ պարը «Մշոյ Պար»-ն էր որ ոչինչով կը զիջեր հնդկական, արժանթիւնեան, արաբական եւ ռումանական պարերուն: Խրոխտ էին տղոց մենակատարումները ու խանդավառող:

«Անդրանիկ»ի ելոյթը յաջող էր: Կը սպասէիք նոյնքան յաջող «աւարտ» մը: Սակայն... «աւարտ»-ը ոսկեգոյն տարազներու շքերթ մըն էր միայն:

«Անդրանիկ»ին եւ պարուսոյց Աշոտ Սարգսեանին կը մաղթենք նոր բեմեր, նոր մտայղացումներ ու նոր յաղթանակներ:

Արաքսի Տեօվլեթեան



## ՊԱՐԱՐԱՆԴԵՍ «ՐԱՅԿԱԿԱՆ» ԵՐԳ ՈՒ ՊԱՐՈՎ

Շաբաթ 3 Ապրիլ 2010-ին Գահիրեի ՅՐԸՄ-ը Չատկուայ առթիւ պարահանդէս մը կազմակերպած էր Յելիոպոլսոյ Novotel պանդոկին մէջ: Գիշերուայ 9:30-էն սկսեալ սրահէն ներս մուտք կը գործէին զոյգեր որոնք չէին ուզած զրկուիլ այս բացառիկ պարահանդէսէն ուր ներկայ պիտի գտնուէին Յալէպէն հրաւիրուած ՅԵԸ-ի «Անդրանիկ» պարախումբի անդամներն ու պատասխանատուները, թիւով 30 հոգի:

Ճաշակով շարուած սեղաններուն շուրջ արդէն իսկ բոլորուած էին ներկաները, որոնց մէջ աչքառու էին մեծ թիւով երիտասարդներ, որոնք եկած էին զուտ հայկական խնջոյք մը վայելելու հալէպահայ երիտասարդներուն հետ:

DJ Արմէի հնչեցուցած մեղմ մեղեդիներէն մղուած, զոյգեր սկսան պարահարթակը գրաւել, սակայն շքեղ ու այլազան ուտելիքներու ազատ շքասեղանէն ետք էր որ սկսաւ պարահանդէսին բուն խանդավառութիւնը: Յալէպի «Անդրանիկ»-ի ու Գահիրեի «Չանգեզուր»-ի անդամները ձեռք- ձեռքի եւ ուս-ուսի հայկական պարեղանակներու հնչիւններուն տակ թնդացուցին սրահը: Ուրիշ երիտասարդներ, որոնք քիչ մը վարանումով պարահարթակ բարձրացած էին, ձերբազատուեցան իրենց պրկուած

վիճակէն ու պարեցին ազատ ու համարձակ: DJ Արմէն պարահարթակը լեցուն պահեց իր ընտրած հայկական ու եւրոպական եղանակներով:

Կարճ ընդմիջումի մը ընթացքին Գահիրեի ՅՐԸՄ-ի աշխոյժ ատենապետ Տոքթ. Վիգէն Ճիգմեճեան բարի գալուստ մաղթեց Յալէպի խումբին ու անցաւ վիճակահանութեան: Ի տարբերութիւն ուրիշ պարահանդէսներու, վիճակահանութեան տոմսեր չծախուեցան, այլ ըստ մուտքի տոմսերուն վրայի թիւերուն, բախտաւոր մի քանի ներկաներ ստացան պարգէւներ: Այս կարճ դադարը առիթ տուաւ շուրջպարի սիրահարներուն քիչ մը հանգչելու ու յետոյ անելի աշխուժութեամբ սրահը թնդացնելու: Կես գիշերը շատո՛նց անց էր երբ ականայ, ներկաները սկսան հրաժեշտ տալ:

Վարձքը կատար Գահիրեի ՅՐԸՄ-ի վարչութեան որ գեղեցիկ գաղափարը ունեցած էր Յալէպէն «Անդրանիկ» պարախումբը հրաւիրելու, մշակոյթի միջոցաւ սերտացնելու կապերը տարբեր գաղութներու մէջ բնակող սփիւռքահայ երիտասարդներու միջեւ եւ սատարելու հայ մշակոյթն ու լեզուն կենդանի պահելու անոնց սրտերուն ու մտքերուն մէջ:

Սօսի Ներետեան-Յակոբեան



Երիտասարդութիւնը խրախճանքի պահուն



## **ՆՈՐ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ**

### **ԱՐԱՔԵՐԵՆ ԼԵԶՈՒՈՎ «ԱՐԵԳ» ԱՄՍՕՐԵԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ**

Գահիրեի ՅԲԸՄ-ը ընթացիկ տարուայ Ապրիլէն սկսեալ կը հրատարակէ արաբերէն լեզուով ամսօրեայ նոր պարբերական մը, որ եկաւ լեցնելու, շուրջ տարիէ մը ի վեր գոյութիւն ունեցող կարելոր պարապ մը:

Պարբերականին խմբագիրն է ծանօթ պատմաբան Տոքթ. Մոհամետ Ռիֆաաթ Էլ Իմամ, խմբագրութեան հայկական նիւթերու խորհրդատուն՝ Տիար Պերճ Թերզեան եւ խմբագրութեան քարտուղարը՝ Ալի Սապէթ Սապրի:

Պարբերականը կը բաղկանայ 21x 29 սմ. չափով 24 էջեր: Անոր պատրաստութիւնը եւ տպագրութիւնը իրագործած է «Տիգայն Արդ» հաստատութիւնը:

Խմբագիր Տոքթ. Մոհամետ Ռիֆաաթ Էլ Իմամ պարբերականին անդրանիկ թիւին առաջնորդող յօդուածին մէջ ի միջի այլոց կը նշէ, թէ գոյութիւն ունին պատմական, ինչպէս նաեւ ներկայի եւ ապագայի դրդապատճառներ, որոնք կը մղեն ՅԲԸՄ-ը կառչելու արաբերէն հրատարակութիւն մը լոյս ընծայելու գաղափարին, որպէսզի ան վերածուի հաղորդակցութեան եւ կապի միջոցի մը հայերու եւ աշխարհասփիւռ արաբախօսներուն միջեւ:


Նոյնպէս «Արեգ»-ը պիտի ցոլացնէ Հայ-արաբական եւ մասնաւորապէս Հայ-եգիպտական մշակութային փոխյարաբերութեան ստեղծումին ի խնդիր ՅԲԸՄ-ի ունեցած բաղձանքը:

Մէկ խօսքով ՅԲԸՄ-ը կը յուսայ որ «Արեգ»-ը հանդիսանայ արաբ եւ հայ մշակոյթներու դիւանը:

Նշենք, թէ «Արեգ»-ը անվճար պիտի առաքուի արաբական աշխարհի համալսարաններուն, գրադարաններուն եւ ծանօթ մտաւորականներուն:

Նոյնպէս ան պիտի ղրկուի Եգիպտոսի մէջ գործող մշակոյթի պալատներուն, քրոնիկագիրներուն, արաբական դեսպանութիւններուն, ինչպէս նաեւ Երեւանի մէջ գործող արաբական պետութիւններու դեսպանութիւններուն եւ այլ հայրենի մշակութային հիմնարկութիւններուն:

Յաջող եւ բարի երթ «Արեգ»-ին:



«S»



## ՀԲԸՄ-ի ՎԵԼԻՊՊՈՒՍՈՅ «ՍԱԹԵՆԻԿ ՉԱԳՐ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՂՈՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻ ԵՒ ԹՈՒԱՅԻՆ ՇԱՐԺԱՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ԸՆԴԱՔՆԵՐ

Գահիրեի ՀԲԸՄ-ի թատերական ինչպես նաև թուային շարժանկարահանումի եւ խաղարկութեան արուեստներու խումբին առաջին հաւաքոյթը տեղի ունեցաւ Կիրակի 14 Փետրուարին, վերջերս վերանորոգուած Զելիոպոլսոյ մասնաճիւղին՝ Չագըր Մշակութային կեդրոնին մէջ: Աշխատանքային հաւաքոյթները տեղի ունեցան շաբաթը երկու անգամ, երեք ամիս տեւողութեամբ: Զինգշաբթի օրերը սահմանուած էին թատերական խումբին հաւաքոյթներուն, մինչ Շաբաթ օրերը՝ թուային շարժանկարահանումի աշխատանքներուն. երկուքն ալ երեկոյեան 7-էն 10:

Այս արուեստագիտական հաւաքոյթներուն նպատակն է մղել հայ երիտասարդները ստեղծագործելու, անոնց մէջ արթնցնելով սերը եւ գնահատանքը հանդէպ խաղարկութեան արուեստին եւ գեղեցկագիտական արժէքներուն՝ միութենական եւ ընկերային ջերմ մթնոլորտի մը մէջ:

Շաբաթական հաւաքոյթները տեղի ունեցան վերջերս վերանորոգուած Չագըր Մշակութային կեդրոնին մէջ, 26 Մուրատ փողոց, Զելիոպոլիս:

Ծրագրի առաջին խմբային աշխատանքի (Փետրուարէն Ապրիլ 2010) նպատակն է իրագործել հետեւեալ երկու աշխատանքները.

### 1. ԲԵՄԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆ:

Պատրաստութիւն դերակատարութեան (շարժում, յօրինում, բեմադրութիւն), ձայնային վարժութիւններ (ընթերցանութիւն, արտասանութիւն, դերակատարութիւն), խմբական ծրագիրներ (ուրուագծեր, միարար թատերախաղեր, մանկական հեքիաթներու խաղարկութիւն), պատմութիւն պատմել փոքրերուն եւ մենակատարութիւններ:

### 2. ԹՈՒԱՅԻՆ ՇԱՐԺԱՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆ:

Պատրաստութիւն շարժանկարչութեան եւ «Video»-ի արուեստին, մտապատկեր եւ նկարի ընտրութիւն:

Ֆիլմերու DVD ներկայացում, հայկական շարժանկարներ, գաղութային լուրերու խմբակ:

«You tube». կարծիքներու փոխանակումներ, վերլուծումներ, հակազդեցութիւններ, այժմեական հայկական լուրերու քննարկում:

Գահիրեի ՀԲԸՄ-ի մշակութային այս ձեռնարկը կը կատարուի Թովմաս Չաքարեանի հսկողութեան տակ:

Թրգմ. Անայիս Ճիգմեճեան







## ԵԳԻՊՏԱՐԱՅ ՀԱԲԱՔԱԿԱՆԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ, ՀՄԸՄ ԱՐԱՐԱՏԻ ԵՎ Ս. ԹԵՐԵՉԱՅԻ ՄԷՋ

Օգոստոս 9-16, 2009-ին, Երեւանի մէջ կայացած Համահայկական խաղերուն Եգիպտոսէն մասնակցեցան երկու պասքեթպոլի խումբեր Գահիրէ եւ Աղեքսանդրիա անուններով, կազմուած Գահիրէէն ՀՄԸՄ Նուպար, ՀՄԸՄ Արարատ եւ Ս. Թերեզա, իսկ Աղեքսանդրիայէն ՀՄԸՄ Նուպար եւ ՀՄԸՄ Կամք ակումբներու լաւագոյն մարզիկներէն:

Քաջալերուած Գահիրէի խումբին ձեռք բերած յուսադրիչ արդիւնքէն (6-րդ 16 խումբերու մէջ), գաղութին մէջ աննախընթաց որոշում մը առնուեցաւ այս «հաւաքական»-ը պահելու, փորձերը շարունակելու եւ եգիպտական խումբերու դէմ մրցումներ կազմակերպելու:

Խումբի մարզիչ Խորէն Գալընեան, օգնական մարզիչ Գրիգոր Միքայելեան եւ խումբի վարչական պատասխանատու ճորճ Թորոսեան գաղափարը ունեցան ձմրան եղանակին, երբ միջակումբային հայկական մրցումները կը դադրին, հերթաբար 3 մրցումներ կազմակերպելու Գահիրէի հայկական մարզակումբներուն մէջ:

Առաջին մրցումը տեղի ունեցաւ Ուրբաթ, 12 Փետրուար 2010-ին Գահիրէի ՀՄԸՄ Նուպարի դաշտին վրայ Տախլէյայի խումբին դէմ:



Գահիրէի հաւաքականի խումբը

Օգոստոս 2009-էն ի վեր խումբը միայն մի քանի փորձ ըրած էր եւ նկատելի էր խաղացողներուն աններդաշնակ խաղարկու-

թիւնը՝ աւելի ճշգրիտ ըլլալու համար, խմբային խաղի պակասը: Մրցումին արձանագրուած գրեթէ բոլոր կետերը անհատական խաղարկութեան արդիւնք էին. խումբը տակաւին միաձուլուած չէր եւ կարծեք ամէն մարզիկ կը փորձեր իր լաւ խաղարկութիւնը ցուցաբերել որն ի վնաս «հաւաքական»ին էր:

Բաւական զօրաւոր, հետաքրքրական ու արագ մրցումէ մը ետք Տախլէյայի խումբը յաղթեց 77-72 արդիւնքով:

«Հաւաքական»ին երկրորդ մրցումը տեղի ունեցաւ Ուրբաթ, 19 Փետրուար 2010-ին ՀՄԸՄ Արարատի դաշտին վրայ: Հակառակ որ մրցակից խումբը Ահլի ակումբի 20 տարեկանէն վար տղոց խումբն էր, սակայն «հաւաքական»ը կրկին չկրցաւ յաղթանակ արձանագրել ու մրցումը աւարտեցաւ 62-57 արդիւնքով:

Ծրագրուած վերջին մրցումը կայացաւ Ս. Թերեզայի դաշտին վրայ Կիրակի 7 Մարտ 2010-ին Գահիրէի Ամերիկեան Համալսարանի (AUC) խումբին դէմ: Գահիրէի «հաւաքական»ը բաւական փորձ ընելէ եւ 2 մրցում խաղալէ ետք կարծեք սկսած էր թափանցել խմբային խաղի մարտավարութեան, ցուցաբերեց աւելի ներդաշնակ ու լաւ խաղարկութիւն մը: Երկու խումբերն ալ բարձր մակարդակի, շատ տաք ու հետաքրքրական մրցում մը խաղացին:

Մինչեւ վերջին երկվայրկեանները կարելի չէր գիտնալ թէ ո՞վ պիտի ըլլար յաղթականը: Իրաւարարին սուլիչը երբ հնչեց արդիւնքը 73-72 էր ի նպաստ մեր տղոց:

Գովելի ծրագիր մըն էր այս մրցումներու շարքին կայացումը որուն ընթացքին մարզիկներ թէ մարզասեր հասարակութիւն, ձերբազատուած էին իրենց խումբերուն հանդէպ ունեցած կողմնակալութիւններէն, ըմբռնանքին ներկայացուած մաքուր ու գեղեցիկ խաղերը:

Սօսի Ներետեան-Յակոբեան



## ՊԱՏԱՆԵԿԱՆ ՃԱՄԲԱՐ «ՌԻԱՏԻ ՔԱՄՔ»-Ի ՄԵՋ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄՔ ԸԲԸՄ-Ի ՍՈՒՐԻՈՅ, ԼԻԲԱՆԱՆԻ ԵՒ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԱՍՆԱՃԻՂԵՐԷՆ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

Շաբաթ 6 Փետրուարին, Գահիրե ժամանեցին ՅԲԸՄ ՅԵԸ-ի Յալէպի մասնաճիւղէն տասը՝ եւ Պէյրութի մասնաճիւղէն եօթը պատանիներ:

Կիրակի առաւօտ անոնց միացան Գահիրէն եւ Աղէքսանդրիայէն պատանիներ:

Մօտ վաթսուն հոգիսց խումբը մեկնեցաւ «Ուատի Քամբ»-ի բանակավայրը, որ կը գտնուի Գահիրե-Աղէքսանդրիա ճանապարհին՝ «Ուատի Ալ Նաթրուն» շրջանին մէջ:

Այս առթիւ պատրաստուած ծրագիրը բաւական խիտ էր:

Ան կ'ընդգրկեր խաղեր պատրաստուած «Ուատի Քամբ»-ի պատասխանատուներուն կողմէ եւ այլ ձեռնարկներ պատրաստուած Գահիրեի ՅԲԸՄ-ի կողմէ:

Յետաքրքրական խաղերէն նշենք՝ Dodgeball, Zip Line, High Ropes, գանձարշաւ, դրօշարշաւ եւ ջահ փախցնելու խաղերը:

Իսկ արծարծուած ամենօրեայ հայկական նիւթերէն նշենք՝ «Brainstorming»-ը եւ «Debate»-ը որոնց ընթացքին պատանիները յայտնեցին իրենց կարծիքները Յայ ըլլալու նկատմամբ եւ վիճաբանեցան թէ ո՞վ աւելի հայ է, հայախօսը՝ թե՛ ոչ-հայախօսը:

Այս երկու ծրագիրները ղեկավարեց Տոքթ. Վիգէն Ծիգմէճեան: Նոյնպէս ցուցադրուեցաւ ամերիկահայ դերասան Վահէ Պերպերեանի

ներկայացուցած զուարճալի դրուագներէն հաւաքածոյ մը:

«Powerpoint»-ի միջոցով Ռուբինա Ասլանեան եւ Արփի Խաչերեան ներկայացուցին կարգ մը համբաւաւոր հայեր:

Վերջին օրը հարցամրցում մը տեղի ունեցաւ այս համբաւաւոր անձերուն մասին Ալֆա եւ Օմէկա խումբերուն միջեւ: Յարցամրցումը ղեկավարեցին Գահիրէն պատասխանատուներ՝ Թալին Գալիշեան եւ Վահան Թերզիպաշեան:

Յինգշաբթի Փետրուար 11-ին խումբը Գահիրե վերադարձաւ: Երեկոյեան ՅԱՅ Կոկանեան սրահին մէջ տեղի ունեցաւ խրախճանք, իսկ Ուրբաթ առաւօտ հիւրերը այցելեցին Կիզայի Բուրգերը եւ Եգիպտական Թանգարանը:

Երեկոյեան հիւրերը եւ եգիպտահայ պատանիները իրարու հանդիպեցան ՅՄԸՄ Նուպար մարզադաշտին մէջ:

Անոնք դիտեցին Basketball-ի մրցում մը «Եգիպտահայ Յաւաքական»ի եւ «Տախլէյա»ի խումբերուն միջեւ:

Ուշ գիշերին պատանիները դժուարաւ իրարմէ բաժնուեցան կրկին հանդիպելու յոյսով...

Արփի Խաչերեան





## ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ

### ՄԱՐԶԱԿԱՆ ՕՐ

Շաբաթ 13 Փետրուարին, Գահիրեի ՀՄԸՄ Նուպար ակումբի երիտասարդաց յանձնախումբը, իր կեդրոնին մեջ, կազմակերպած էր մարզական օր մը՝ առաւօտեան ժամը 11-էն սկսեալ:

«Մարզական Օրը» ընդգրկած է այլազան մարզական խաղեր, ինչպէս «պասքէթպոլ», ֆութպոլ, պարան քաշել եւ այլն:

Բոլոր յաղթողները ստացան յիշատակի նուէրներ:

Սոյն մարզական օրուան, հայ երիտասարդներուն օտար բարեկամներն ալ սիրով հրաւիրուած էին: Սակայն իւրաքանչիւր հայ պարտաւոր էր նախապէս տեղեկացնել կազմակերպիչ երիտասարդաց յանձնախումբին թէ քանի՞ հոգի պիտի ընկերանային իրեն: Իսկ այդ օրը՝ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի մուտքին կախուած գրատախ-



տակին վրայ իւրաքանչիւր հայ պարտաւոր էր գրել իր անունը եւ իրեն ընկերացող օտար բարեկամներուն անունները:

Այդ օրը անհրաժեշտ էր բերել մէկը սեւ եւ միւսը ճերմակ երկու T-shirt-ներ:

Համադրեց՝ Անայիս Ճիգմեճեան

## ԳԵՌՐԳ ՍԱԳԱՅԵԱՆ ՅԱՂԹԱԿԱՆ՝ ԳԱՇԻՐԵԻ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԳՆԴԱՍՈՒՂԻ ՄՐՑԱՇԱՐՔԻՆ

Գահիրեի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի կազմակերպած 2010-ի գնդամուղի մրցաշարքին վերջին ճակատագրական մրցումը տեղի ունեցաւ Կիրակի 14 Փետրուարին: Սոյն աւարտական մրցումին՝ բարձր մակարդակի գեղեցիկ խաղարկութենէ մը վերջ, Գերրգ Սագայեան յաղթեց իր մրցակցին՝ Վահէ Վարժապետեանի 4-2 (0-1, 3-1, 4-2) արդիւնքով:

Գնդամուղի 8-րդ մրցումին աւարտին բիւրեղեայ բաժակներ յանձնուեցան յաղթական առաջին եւ երկրորդ դիրքը գրաւողներուն:

Կիսաւարտական մրցումին Գերրգ Սագայեան պարտութեան մատնած էր անցեալ տարուան ախոյան Արմէն Վարժապետեանը 3-1 արդիւնքով:

Համադրեց՝ Անայիս Ճիգմեճեան



Մրցաշարքին մասնակիցներուն խմբանկարը



Գերրգ Սագայեան օրուան նախագահ Պերճ Թուլումպաճեանէ կը ստանայ մրցաշարքին բաժակը



## ՀԱՐԱՆՆԵՐ

### ԳԱՀԻՐԵԻ ՀԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹ ՁԲՕՍԱՊՏՈՅՏԸ ԴԵՊԻ ՖԱՅՈՒՄ

Ուրբաթ 19 Փետրուարին, Գահիրեի ՀԱՐԱՆՆԵՐ Կազմակերպութիւնը կազմակերպած էր դեպի Ֆայում, իր անդամներուն եւ համակիրներուն համար: 46 հոգի մասնակցեցան այս պտոյտին, որոնք հաճելի օր մը անցուցին Գարուն լճին ափերուն, վայելելով ջինջ օդը, հաճելի խաղաղ մթնոլորտը եւ շրջակայքը:

Մասնակիցները օրը անցուցին «Յելան Օպերթ Տիւ Լաք»-ին մէջ, ուր ճաշեցին եւ նաւակներով պտըտեցան լճին վրայ:

Երեկոյեան ժամը 7-ին մօտ, խումբը վերադարձած էր կեդրոն, ճիշդ ժամանակին ներկայ ըլլալու համար հաւաքականին մրցումին ընդդէմ Ահլիի 20 տարեկանէն վար տղոց խումբին:

Այսպիսի պտոյտները լաւագոյն առիթը կ'ըն-



ծայեն բարեկամներով հաճելի ժամանակ անցընելու տարբեր միջավայրերու մէջ:

Հաւանական յաջորդ պտոյտը դեպի ...Փոր Սայիտ:

Համադրեց՝ Անայիս Ճիգմեճեան

## ՈՋԻԱՐԱՍԵՂԱՆ

Չորեքշաբթի 24 Փետրուարին, Գահիրեի ՀԱՐԱՆՆԵՐ Կազմակերպութիւնը ոգիարասեղան մը սարքուցաւ ի պատիւ 2009-ի եգիպտահայ «պասքէթ-պոլի» մրցաշարքերուն ախոյեան՝ ակումբին երեց տղոց խումբին:

Այս աւանդական շքասեղանը հովանաւորուած էր Տէր եւ Տիկին Պերճ Թերզեանի կողմէ առ ի գնահատութիւն խումբին անցեալ մարզական եղանակի հիւսիս մրցաշարքերէն չորսին տարած պատուաբեր յաղթանակներուն

եւ բաժակին տիրացած ըլլալուն համար:

Սոյն հաւաքոյթին հրաւիրուած էին Գահիրեի ՀԱՐԱՆՆԵՐ Կազմակերպութիւնը վարչականները իրենց տիկիներով, յաղթական խումբին անդամները, ինչպէս նաեւ մօտիկ բարեկամներ:

Վարձքերնիդ կատար... թող աւելի եւ աւելի բազմաճանաչ բաժակները ակումբիս ցուցափեղկերուն մէջ:

Համադրեց՝ Անայիս Ճիգմեճեան





## ՀԱՐԱՆՈՒՊԱՐ

### ԶԲՕՍԱՊՏՈՅՑ ԴԵՊՈՒ ԱՂԵՔՍԱՆՈՐԻԱ

Գահիրեի ՀՄԸՄ Նուպարի վարչությունը քաջալերելու համար ակումբի աղջիկներուն եւ 18 տարեկանէն վար տղոց խումբերու անդամները, գաղափարը ունեցած էր զբօսապտոյտ մը կազմակերպելու դէպի Աղեքսանդրիա, ուր տեղւոյն ՀՄԸՄ Նուպարի դաշտին վրայ բարեկամական մրցումներ ծրագրուած էին կայացնել:

Ուստի Ուրբաթ, 26 Մարտ 2010-ին, երկու խումբերու մարզիկները, մարզիչ գաբթէն Ապեր, աղջիկներու խումբին պատասխանատու Տիկին Սօսի Յակոբեան, տղոց խումբին պատասխանատու Պր. Ժիրայր Յակոբեան եւ տասնեակ մը ծնողներ ու համակիրներ, հանգստաւետ հանրաշարժով մը ուղղուեցան դէպի Աղեքսանդրիա:

Այդ օրը կը զուգահեռէր Աղեքսանդրիոյ Տիգրան Երկաթ ակումբի տարեկան Չատկուայ պազարին. Գահիրեի խումբը նախ ուղղուեցաւ դէպի Տիգրան Երկաթ, ուր ակումբին աստեղապետուհի Տիկին Աստղիկ Ալեքսանեան սիրալիբ կերպով ընդունեց բոլորը: Ակումբին պարտէզը քով-քովի շարուած սեղաններուն շուրջ ճաշելէ ետք, խումբը ուղղուեցաւ դէպի ՀՄԸՄ Նուպար պատրաստուելու համար մրցումներուն: Քիչ ետք հասան Աղեքսանդրիոյ խումբին աղջիկները, ՀՄԸՄ Նուպարի ատենապետ՝ մարզիչ Տոքթ. Կարպիս Թոսունեանի հետ: Երբ ամիս մը առաջ Գահիրեի ՀՄԸՄ Նուպարի պատասխանատուները փափաք յայտնած էին Տոքթ. Կարպիսին բարեկամական մրցումներ կազմակերպելու երկու քոյր միութիւններու խումբերուն միջեւ, ան մեծ խանդավառութեամբ ընդառաջած էր: Սակայն Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ Նուպար

ըր 18 տարեկանէն վար տղոց խումբ չունենալուն պատճառաւ, տեղական Ֆարոս համալսարանի տղաքը հրաւիրուած էին Գահիրեի տղոց դէմ խաղալու:

Առաջին մրցումը սկսաւ կ.ե. ժամը 4:30-ին երկու ՀՄԸՄ Նուպարներու աղջիկներու խումբերուն միջեւ: Հակառակ որ մակարդակի մեծ տարբերութիւն կայ Գահիրեի եւ Աղեքսանդրիոյ խումբերուն միջեւ, սակայն գնահատելի է Աղեքսանդրիոյ պատրաստակամութիւնը բնաւ չմերժելու Գահիրեի աղջիկներուն դէմ խաղալու առաջարկը: Մրցումը ավարտեցաւ 57-10 ի նպաստ Գահիրեի:

Երկրորդ մրցումը Գահիրեի ՀՄԸՄ Նուպարի եւ Ֆարոս համալսարանի տղոց խումբերուն միջեւ էր: Հակառակ տարիքի ու հասակի անհամեմատութեան ՀՄԸՄ Նուպարի տղաքը շատ արագ ու ինքնավստահ խաղացին ու ցուցաբերեցին բարձր մակարդակի խաղ: Մրցումը ավարտեցաւ ի նպաստ ՀՄԸՄ Նուպարի 47-39 արդիւնքով:

Խումբը կ'աճապարէր անմիջապէս ճամբայ ելլելու դէպի Գահիրե: Ժամանակ շահելու համար, Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ-ի պատասխանատուները արդէն իսկ «բիցցա»ներ ապսպրած ու հանրաշարժ փոխադրած էին բոլոր գահիրեցիներուն համար:

Այս տեսակ փոխայցելութիւններ քոյր միութիւններու հետ պէտք է կատարուին յաճախ, մարզականի միջոցաւ սերտացնելու կապերը երկու ակումբներու պատանիներուն ու երիտասարդներուն միջեւ:

Սօսի Ներետեան-Յակոբեան





## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԸԱՅ-ԱՐԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Գահիրեի Համալսարանի տնօրեն Տոքթ. Հուսամ Զամելի հովանավորությամբ 29 Մարտ 2010-ին, տեղի ունեցավ Գահիրեի Համալսարանի Հայկական Ուսումնասիրություններու Կեդրոնին կազմակերպած միջազգային երրորդ գիտաժողովը, նուիրուած հայ-արաբական տնտեսական յարաբերություններուն:

Գիտաժողովի մասնակիցներուն բարի գալուստի խօսքեր ուղղեցին Եգիպտոսի մօտ ՀՀ դեսպան՝ Տոքթ. Արմէն Մելքոնեան, համալսարանի գրականութեան ֆակուլտետի բաժնի վարիչ՝ Տոքթ. Չէյն Էլ-Ապիտին Ապու Խատրա եւ Կեդրոնին տնօրէնուհին՝ Տոքթ. Չէյնապ Ապու Սիննա: Անոնք բարձր գնահատեցին Կեդրոնին կատարած գործունէութիւնը հայ-արաբական գիտական, կրթական եւ մշակութային յարաբերություններու զարգացման ուղղութեամբ:

Խորհրդաժողովի բացման նիստին կար-

դացուեցան բարեւագիրներ ուղարկուած ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարար Արմէն Աշոտեանի եւ Լիբանանի տնտեսութեան նախարար Աբրահամ Տետեանի կողմէ:

Խորհրդաժողովին մասնակցեցան մօտ 20 գիտնականներ Եգիպտոսէն, Հայաստանէն, Սուրիայէն, Լիբանանէն եւ ԱՄՆահանգներէն: Հայ-արաբական տնտեսական յարաբերություններուն մասին մասնակիցներուն պատրաստած զեկուցումները մեծապէս կը գնահատէին դարերու ընթացքին Միջին Արեւելքի մէջ հայերու ունեցած ներդրումին, վաճառականութեան եւ տնտեսութեան զանազան ոլորտներու զարգացման մէջ:

Կը նախատեսուի յառաջիկայ տարի կազմակերպել չորրորդ գիտաժողովը որուն նիւթը պիտի ըլլայ «Հայերը արաբական աղբիւրներու մէջ»:

«Տ»





## ՎԱՐՂԱՆԱՆՑԸ ԿՐ ՆՇՈՒԻ ՐԱՅ ԳԵՂԱՐՈՒԵՍԱՍԻՐԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԷՋ



Հայ Գեղարուեստասիրաց Միության Թեքեան սրահին մէջ, Փետրուար 20-ի երեկոյեան, մօտ յիսուն հայորդիներ հաւաքուած էին նշելու համար Վարդանանցի տօնը:

Ձեռնարկը կը վայելէր հովանաւորութիւնը գաղութիս բարեխնամ Առաջնորդ Տ. Աշոտ Եպիսկոպոս Մաացականեանի:

Հայ Գեղարուեստասիրաց Միության ատենապետ Տիար Գրիգոր Մարգարեան, որ կը վարէր հանդիսութիւնը, յայտարարեց թէ այս հանդիսութիւնը 64-րդն է, առաջինը ըլլալով 1947 Փետրուար 13-ինը, եգիպտահայոց նախկին Առաջնորդ Մամբրէ Արքեպիսկոպոս Սիրունեանի հովանաւորութեամբ:

Տիար Մարգարեան շեշտեց թէ այս հանդիսութիւնը պատմականօրէն դարձեալ կը կազմակերպուի, միասնաբար ՀԳՄ-ի, Կոկանեան Սրահի եւ Հայկական Ընթերցասրահի կողմէ:

Հանդիսութեան ներկայ էին Տիար Անդրանիկ Մետրոպեան՝ Թեմական Ժողովի ատենապետ եւ իր Տիկինը, Տիար Նուպար Սիմոնեան՝ Կոկանեան Սրահի ատենապետ եւ իր Տիկինը, Տիար Մարտիկ Պալայեան՝ Հայկական Ընթերցասրահի ատենապետ եւ Տիար Օննիկ Պըլըքտանեան՝ Գահիրէի Ազգային Իշխանութեան կողմէ:

Օրուան յայտագիրը սկսաւ Բարիտուրեանի Նազպարի գեղեցիկ մատուցումով զոր դաշնամուրի վրայ կատարեց Օրիոհի Արփի Ճանիկեան: Ապա, ներկայացուեցաւ Կոմիտասեան Կռունկը, մեղմանուած կա-



տարումով, Գահիրէի Պետական Օփերայի առաջին ջութակահար Գեորգ Յարութիւնեանի կողմէ:

Վահան Թեքեան Երիտասարդաց յանձնախումբի ընդհանուր պատասխանատու Օրիորդ Զրիսթին Թատրոս ընթերցեց Տիկին Ալիս Տեփոյեանի Վարդանանցի մասին գրութիւններէն մին, ապա Տիար Մարգարեան բեմ հրաւիրեց օրուան բանախօս Արժանապատիւ Տ. Յակոբ Քիւյ. Յակոբեանը որ ներկայացուց իր պատգամը, նշելով թէ Վարդանանցի հերոսներուն համար "Անիմաստ կեանքը մահ է, իսկ իմաստաւորուած մահը անմահութիւն":



Ան փակեց իր խօսքը Ս. Պօղոս Առաքեալի փիլիպպեցիներուն ուղղուած խօսքերով՝, "Ինձի համար ապրիլը Զրիստոս է ու մեռիլը շահ":

Հանդիսութիւնը աւարտեցաւ Տ. Աշոտ Եպիսկոպոս Մաացականեանի աղօթքով եւ օրհնութեամբ, որմէ ետք ներկաները հրաւիրուեցան գինեծօնի եւ քեշկէկի սպասարկութեան:

Թող վառ մնայ յիշատակը Վարդանանցի հերոսներուն մեր մտքերուն ու հոգիներուն մէջ:

Գարուիկ Ծուշանեան



## ՏԵԼԵՄԱՔ ԵՒ ԷՕԺԵՆԻ ՔԻՒՐՔՃԵԱՆ 811,223 ՏՈՒՐ ԿՐ ԿՏԱԿԵՆ ՇՐՇՄ-Ի ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ԾՐԱԳՐԻՆ

Տելեմաք Քիւրքճեան ծնած է Արաբկիր 1905-ին:

Մեծ Եղեռնի դժնդակ օրերուն, Քիւրքճեան ընտանիքը կ'ապաստանի Եգիպտոս: Այնտեղ՝ երիտասարդ Տելեմաքը, ընտանիքին զանազան անդամներուն հետ, կը մտնէ առեւտուրի ասպարէզ եւ կը զբաղի վաճառականութեամբ՝ մասնաւորաբար գործելով Գահիրէի եւ Սուտանի զանազան քաղաքներուն միջեւ:

Յետագային, Տելեմաք իր եղբօր՝ Յայկազունի հետ, Գահիրէի մէջ, կը հիմնէ անկախ առեւտրական հաստատութիւն մը՝ «Քորտոֆան վաճառականական ընկերութիւն» անունին տակ: Այդ շրջանին կը հանդիպի շնորհալի Էօժէնի Բամպուքճեանին եւ շուտով կ'ամուսնանան:

Իրենց կեանքին ամբողջ ընթացքին, Տելեմաք եւ Էօժէնի օժանդակած են հայերուն եւ նեցուկ կանգնած՝ հայկական կազմակերպութիւններուն: Անոնք մասնաւորաբար շահացած են քաջալերել հայ նոր սերունդը որ

պահէ ու պահպանէ իր մայր լեզուն:

Տելեմաք Քիւրքճեան մահացած է Լոնտոն 1987-ին իսկ Էօժէնի՝ Թորոնթօ 2006-ին: Ողբացեալ Էօժէնի Քիւրքճեանի ցանկութեանց եւ կտակին համաձայն, իշխանավայել նուիրատուութիւն մը կատարուած է Լոնտոնի ՅԲԸՄ-ին՝ նուիրատուներուն անունով ֆոնտ մը հաստատելու համար:

«Տելեմաք եւ Էօժէնի Քիւրքճեան օժանդակութեան ֆոնտ»-ը՝ որուն գումարը 811,223 տոլար է, պիտի սատարէ հայ ուսանողներուն, կրթաթոշակի ձեւին տակ, որպէսզի անոնք կարենան իրենց ուսումը շարունակել համալսարաններու մէջ:

Նկատի առնելով ՅԲԸՄ-ի անբասիր գործունեութիւնը եւ ազգային հաստատութեանց հանդէպ անոր ունեցած պատասխանատուութեանց խոր գիտակցութիւնը, Քիւրքճեանները այս կազմակերպութեան վստահած են իրենց կտակին մատակարարումը:

Թրգմ. Անայիս Ճիգմեճեան

## ԳԵՂԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԵՒ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆՂԵՍ ԸԳՄ-Ի ԹԵՔԵԵԱՆ ՍՐԱՀԻՆ ՄԵՋ

Շաբաթ, 20 Մարտի երեկոյեան ժամը 8:30-ին, ՅԳՄիութեան Թեքեան սրահին մէջ, ի ներկայութեան Թեմիս Բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ Սրբ. Եպիսկոպոս Մնացականեանի, պատուոյ հիւրեր ՅԳ Լիազօր եւ Արտակարգ դեսպան Տոքթ. Արմէն Մելքոնեանի եւ Տիկնոջ, նաեւ արուեստասէր հասարակութեան մը, արուեստագետ Նիհատ Պահկաթ բացումը կատարեց Եասեր Ռոսթոմի, Շահէն Մազլումեանի եւ Գեղամ Ճղալեանի արուեստի գործերու ցուցահանդէսին:

Քանդակագործ, նկարիչ Եասեր Ռոսթոմի նկարները վառ գոյներու երանգներով փարաւոնական եւ արաբական մոթիվներու ինքնատիպ համադրութեամբ ստեղծագործութիւններ էին:

Երիտասարդ նկարիչ Գեղամ Ճղալեանի սեւ եւ ճերմակ գոյներով ներկայացուած գլխահակ անդէմ մարդիկը կարծես իրենց ինքնութիւնը կը փնտռէին, զիրենք դիտողը մղելով յամենալու ներկայացուած գործերուն առջեւ, թափանցելու անոնց խորքը ու հասկնալու անոնց իմաստը:

Արուեստագետ լուսանկարիչի աչք ունի Շահէն Մազլումեանը: Ան գիտէ երբ, որ անկիւնէն եւ ինչ դիրքի վրայ նկարել ծաղիկը, եկեղեցին, աղջիկը եւ այլն, որոնց մէկ պատահի վրայ միաձուլուած գունազեղ ներկայացումը կը գրաւէր դիտողը:

Հին յուշեր ու նոր յոյսեր առթող յաջող ձեռնարկ մը, որուն համար շնորհակալ ենք:

«Տ»





## «ՄԵԾՆ Ս. ԳՐԻԳՈՐԻ ԿԱՐԳԻ ԱՍՊԵՏ»Ի ԱՍՏԻՃԱՆԻՆ Կ'ԱՐԺԱՆԱՆԱՆ ԵՐՈՊԱՅԵՆ ԵՐԵՔ ՇԱՅՈՐԴԻՆԵՐ



*Չախեն՝ աջ  
Պետրոս Թերզեան, Վահէ Ճազմատարեան եւ Վահէ Կապրաշ*

ՀԲԸՄ-ի Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ եւ ՀԲԸՄ-ի Չուիցերիոյ Ընկերութեան փոխ նախագահ Վահէ Կապրաշ, արժանացած է, «Մեծն Ս. Գրիգորի Կարգի Ասպետ»ի աստիճանին՝ Պապական Եկեղեցւոյ Քահանայապետ՝ Նորին Սրբութիւն Պենետիկտոս ԺԶ-ի հրամանով, առ ի երախտագիտութիւն այն երկարամեայ անձնագոհ ծառայութեան, որ մեծարեալը մատուցած է Կաթողիկէ Եկեղեցիին:

Շքանշանի տուչութիւնը կատարուած է Կիլիկիոյ Յայ Կաթողիկէ Եկեղեցւոյ Կաթողիկոս-Պատրիարք Ամենապատիւ Տէր Ներսէս Պետրոս ԺԹ-ի ձեռամբ, Կիրակի, 28 Փետրուար 2010-ին Յռոմի Յայ Կաթողիկէ Վանքին մէջ, յետ Ս. Պատարագի:

«Մեծն Ս. Գրիգորի Կարգի Ասպետ»ի աստիճանը հաստատուած է 1831-ին Քահանայապետ Գրիգոր ԺԶ-ի կողմէ: Ներկայիս ան Վատիկանի շնորհած երկրորդ բարձրագոյն շքանշանն է:

Բնիկ Լիբանանցի՝ այժմ Չուիցերիաբնակ Պր.Կապրաշ զուիցերիահայ գաղութի կարկառուն դեմքերէն մէկն է եւ հիմնադիրներէն մէկը ՀԲԸՄ-ի Չուիցերիոյ Մասնաճիւղին:

Աւելի քան 20 տարիներէ ի վեր, ան կը գլխաւորէ Չուիցերահայ Միութիւնը եւ նախագահն է զուիցերիական հայկական գաւազան հիմնարկութեանց:

Նոյն պատիւին արժանացած են նաեւ ֆրանսահայ երկու ազգայիններ Վահէ Ճազմատարեան եւ Պետրոս Թերզեան, որոնք «Հայաստան Համահայկական Հիմնադրամ»ի Խնամակալ Մարմնի անդամ են:

Պր. Ճազմատարեան «Արմինիըն Պիզնետ Տօրըմ»-ի նախագահն է եւ ՀԲԸՄ-ի Պատուոյ Անդամ: Իր ծննդավայր Գահիրէի մէջ, Պր. Ճազմատարեան եղած է ղեկավար եւ նուիրած անդամներէն ՀՍԸՄ-Նուպար մարզական ակումբին, իսկ յետագային ալ եղած է Ֆրանսայի ՀԲԸՄ-ի Շրջանակային Յանձնաժողովի գանձապահ:

Պր. Թերզեան ներկայիս «Հայաստան Համահայկական Հիմնադրամ»ի Ֆրանսայի մասնաճիւղի ժրաջան ատենապետն է:

Սոյն հանդիսաւոր տուչութիւնը տեղի ունեցած է Իտալիոյ մօտ ՀՀ դեսպան՝ Ռուբէն Կարապետեանի, Յայ Կաթողիկէ եպիսկոպոսներու, կրօնականներու եւ գանազան երկիրներէ ժամանած հանրածանօթ հիւրերու եւ բարեկամներու ներկայութեան:



## ՆԱԶԱՐ ԵՒ ԱՐՏԵՄԻՍ ՆԱԶԱՐԵԱՆ ԱՄՈՒԽՆ ՆՈՐԱԳՈՅՆ ԲԱՐԵՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՎԱՅՐԵՆԻՔԻ ՄԷՋ

ՀԲԸՄ-ի խնամակալ մարմնի անդամ եւ մեծարգոյ բարերար Նազար Նազարեան եւ իր կողակիցը՝ Արտեմիս, վերջերս Հայաստան մեկնեցան ներկայ գտնուելու համար «Նազարեան ճառագայթաբանութեան Կեդրոն»-ին, ինչպէս նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նոր դիւանատան բացման զոյգ հանդիսութիւններուն:

Ամերիկահայ այս ամուլը իրագործեց վերոնշեալ զոյգ հաստատութիւններու կառուցումը ՀԲԸՄ-ի «Նազար եւ Արտեմիս Նազարեան» հիմնադրամին միջոցով:

### ՃԱՌԱԳԱՅԹԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ԿԵԴՐՈՆ ՄԸ ԵՐԵՎԱՆԻ ՄԷՋ

31 Մարտ 2010-ին բացումը կատարուեցաւ «Լեւոն եւ Գլաուտիա Նազարեան» ճառագայթաբանութեան կեդրոնին: Սոյն կեդրոնը որ միակն է Հայաստանի մէջ, օժտուած է ամենարդիական բժշկական սարքերով եւ մասնագիտական յատուկ փորձաշրջան անցուցած անձնակազմով, որուն շնորհիւ կարելի պիտի ըլլայ բնորոշել ճշգրիտ ախտաճանաչումը զանազան երակային հիւանդութիւններու եւ այսպիսով նուազեցնել կաթուածի պարագաները:



Ձախեն՝ աջ Գոհար Զեալեան (Երեւանի Բժշկական համալսարանի տնօրէն) Նազար եւ Արտեմիս Նազարեաններ եւ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսեան:

### ՆՈՐ ԴԻՒԱՆԱՏՈՒՆ ՄԸ ԷԶՄԻԱԾՆԻ ՄԷՋ

Ապրիլ 5-ին, Էջմիածնի մէջ տեղի ունեցած նոր դիւանատան բացման հանդիսութեան, ՀԲԸՄ-ի նախագահ Պերճ Սեդրակեան ներկայացուց Տէր եւ Տիկին Նազար Նազարեանները եւ գովեց Նազարեան գերդաստանի երկար տասնամեակներու աւանդութիւնը՝ զօրավիզ կանգնելու Հայ Եկեղեցիին, Հայրենիքին եւ Սփիւռքի զանազան համայնքներուն:

Նորին Սրբութիւն Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսը իր գնահատանքը յայտնեց յարգելի բարերարներուն, անդրադառնալով Նազարեան ընտանիքին կատարած բարեգործութիւններուն: Իր նշումներուն մէջ, ան շեշտեց կարեւորութիւնը նորաշէն դիւանատան ապա աւելցուց. «Մենք ուրախ ենք որ հայ ազգին մէջ ունինք նուիրեալ սերունդ մը՝ որ Աստուծմէ ստացած բարիքներէն բաժին կը հանէ ազգին, Հայրենիքին եւ Հայ

Եկեղեցիին: Մեր այդպիսի զաւակներուն շնորհիւ է որ Սուրբ Էջմիածնայ Մայր Աթոռը կը ծաղկի եւ կը բարգաւաճի»:

Նորին Սրբութիւնը իր երախտագիտութիւնը յայտնեց բոլոր անոնց՝ որոնք իրենց մասնակցութիւնը բերին այս նոր շէնքին կառուցման գործին, գլխաւոր ճարտարապետ՝ Արման Աւագեանի, Միացեալ Նահանգներէն եւ «Հորիզոն-95» շինարարական ընկերութեան նախագահ՝ Գագիկ Գալստեանի: Ան նաեւ շնորհակալութիւն յայտնեց Սուրբ Էջմիածնի ճարտարապետութեան բաժնի վարչութեան բոլոր անդամներուն: Հանդիսութեան աւարտին, Նազար եւ Արտեմիս Նազարեանները իրենց սրտագին զգացումները յայտնեցին Նորին Սրբութեան եւ բոլոր ներկայ հիւրերուն:

Թրգմ. Անայիս Ճիզմեճեան

# ԱՆԴԱՄԱԿԱՆ

## ՄԱՅԱԳՐՈՒԹԻՒՆ



ՀԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղի տարեց անդամներէն Ալպեռ Գալընեանի մահը պատահեցաւ 3 Փետրուար 2010-ին:

**«Տեղեկատու» իր խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալին այրիին՝ Տիկին Մարիի, զաւակներուն Տէր եւ Տիկին Խորէն Գալընեանի, Տէր եւ Տիկին Կամալ եւ Ալիա Աուատի եւ Օր. Արփիի, թոռներուն՝ ՀԲԸՄ-ի անդամներ Հրազդանի եւ Նանարի, նաեւ բոլոր հարազատներուն:**

Նոյնպէս իր մահկանացուն կնքեց ՀԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղի անդամ Վրէժ Բլատեան 6 Ապրիլ 2010-ին:

**Խորապէս կը բաժնենք վիշտը հանգուցեալին զաւակներուն՝ Տէր եւ Տիկին Վահէ Բլատեանի եւ Տիար Ռաֆֆի Բլատեանի, նոյնպէս թոռներուն ՀԲԸՄ-ի անդամներ Մանէի եւ Վանի ու հանգուցեալին բոլոր հարազատներուն:**

Ցաւով կ'արձանագրենք անժամանակ մահը ՀԲԸՄ-ի անդամներէն Մարի Էմիրզեանի, որ տեղի ունեցաւ Շաբաթ, 10 Ապրիլին:

**«Տեղեկատու» իր խորազգաց ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալին ամուսնոյն, ՀԲԸՄ-ի առողջապահական հոգատարութեան յանձնախումբի անդամ Տիար Արսէն Էմիրզեանի, զակին՝ Ալէնի, եղբայրներուն ՀԲԸՄ-ի անդամներ Տեարք Պետրոս եւ Աւետիս Սովսեսեաններուն ու բոլոր հարազատներուն:**

